


347

Հ. Ս. Խ. Հ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐԵՆՍԳԻՐԻ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն
 Տ Ր Ե Ս Ի Ը Ռ Ո Ջ Ի Ն Տ Պ Ա Ր Ա Ն
 1924





557 - 129-1

492 (27x18)
557

Հ. Ս. Խ. Հ.

ԴԵԿՐԵՏՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

1924

Մ Ա Ր Տ

№ 2

Յ Ա Ն Կ

Հոդ. 11. Քաղաքացիական դատավարության Որենսգիրք:

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ
III ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

Հ. Ս. Խ. Հ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԳՐԱՔԻ
ՄԱՍԻՆ

1923 թ. սեպտեմբերի 23

1. Հնդունել և հաստատել Հ. Ս. Խ. Հ. Քաղաքացիական դատավարության Որենսգիրքը և կիրարկության դնել 1923 թ. հոկտեմբերի 1-ից:

2. Սույն Որենսգիրքը կիրարկության դնելուց հետո վերացնել քաղաքացիական դատավարության Հ. Ս. Խ. Հ. Ժողովրդական դատարանի կանոնադրքով և Արդարադատության Ժողովրդական կոմիտեի կողմից հրահանգներով սահմանված նորմաները:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի

Նախագահ՝ Ս. Համբարձումյան

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի

Քարտուղար՝ Հ. Տաջյան

Հր. «Սորհրդ. Հայաստան»

1923 թ. մարտի 30, № 217

Հ. Ս. Խ. Հ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՐԵՆՍԱԳԻՐՔ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Գ Լ ՈՒ Խ 1.

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԻՈՒՆՔՆԵՐ

Հոդ. 1. — Քաղաքացիական դատավարութեան սույն Որենսգրքով սահմանված կանոնները պարտադիր են Հ. Ս. Խ. Հ. միասնական դատաստանական սխառեմի բոլոր հիմնարկութեաններին համար (ժողովրդական Դատարանի, Գլխավոր Դատարանի և Գերագույն Դատարանի), ալ և այն հիմնարկութեաններին, վոր դատական ֆունկցիաներ ունին իրենց վերաբերյալ մասնավոր կանոնադրութեանց հիման վրա. բացառութեանները վորոշված են այդ կանոնադրութեաններով:

Հոդ. 2. — Դատարանը ձեռնարկում է գործի ընդունելու շահագրգռված կողմի դիմումի հիման վրա: Դատախազն իրավունք ունի թե գործ սկսելու և թե դատավարութեան ամբողջ ընթացքում գործին միջամտելու լինելու, յեթե յուր կարծիքովն այդ պահանջում է պետութեան կամ աշխատավոր մասսաների շահերի պաշտպանութեանը: Կողմը, ինչ վիճակի մեջ ել վոր լինի գործը, կարող է փոխել դատի հիմունքը, ավելացնել կամ նվազեցնել յուր դատական պահանջները: Դատարանից ե կախված ընդունել կողմի իրեն սրտականող իրավունքներից և նրանց դատական պաշտպանութեանից հրաժարվելը. այդպիսի հրաժարումն ընդունելուց հետո կողմն այլևս իրավունք չունի նույն հիմունքներով դատ սկսելու:

Հոդ. 3. — Դատարանը պարտավոր է գործերը լուծել բանվորադուրացիական կառավարութեան գործող որենքների և կարգադրութեանների, այլև իշխանութեան անդակն մարմինների՝ իրենց վերապահված ձեռնհասութեան սահմաններում հրատարակած վորոշումներին հիման վրա:

Հոդ. 4. — Վերեւ գործ լուծելու համար որենքներ աւ կարգադրութեաններ չլինելու դեպքում դատարանը գործը վճռում է, զեկավարվելով խորհրդային որենսդրութեան ընդհանուր սկզբունքներովն ու բանվորադուրացիական կառավարութեան ընդհանուր քաղաքականութեամբ:

Հոդ. 5. — Դատարանն ամեն կերպ պիտի ձգտի պարզելու դատ-
վողների իսկական իրավունքներն ու փոխհարաբերութիւնները,
ուստի՝ չբավականանալով ներկայացրած բացատրութիւններովն ու
նյութերով, պարտավոր ե կողմերին հարցեր տալով նպաստել գոր-
ծը լուծելու համար եյական նշանակութիւն ունեցող հանգամանք-
ները պարզելուն և ապացույցներով հաստատելուն. դատարանը
պարտավոր ե նաեւ իրեն զիմող աշխատավորների իրավունքների և
որինական շահերի պաշտպանութեանը գործոն աջակցութիւն ցույց
տալ, վորպեսզի նրանց իրավաբանութեան անտեղյակ լինելը, գրա-
գիտութեան թերութիւնը և նման հանգամանքները ի վնաս նրանց
չդատագործվեն: Այս դեպքում դատարանն իրեն զիմող կողմերին
բացատրում ե նրանց դատավարական իրավունքներն ու անհրա-
ժեշտ ձեւականութիւնները, նախազգուշացնելով դատավարական
գործողութիւնների և նրանց անտես անելու հետ կապված հետե-
ւանքների մասին:

Հոդ. 6. — Կողմերը պարտավոր են բարեխղճութեամբ ոգտվել
իրենց պատկանող բոլոր դատավարական իրավունքներին: Դատա-
րանն անհապաղ վերջ պիտի տա ամեն պիտակութեան ու դիմումի,
վորի նպատակն ե ձգձգել կամ խճողել գործը:

Հոդ. 7. — Արտասահմանում կնքված պայմանագրներն ու ակ-
տեր կնքելիս դատարանն աչքի առաջ պիտի ունենա պայմանագիրը
կամ ակտը կազմելու վայրում գործող որենքները, յեթե պայմա-
նագրներն ու ակտերը թույլատրված են Հ. Ս. Խ. Հ. որենքների և
այն պետութեան հետ կնքած համաձայնութեանց հիման վրա, վորի
սահմաններում նրանք կազմված են:

Հոդ. 8. — Յեթե ոտարեկրյա որենքների կիրարկութեան նը-
կատմամբ դժվարութիւններ առաջ գան, դատարանը կարող ե
լնդրել Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիտարիատին, վոր-
պեսզի պատշաճ ոտարեկրյա կառավարութեան հետ հարաբերու-
թեան մասնե ծագած խնդրի մասին յեզրակացութիւն ստանալու
համար: Այդ յեզրակացութիւնը դատարանին ներկայացնում ե Ար-
տաքին Գործերի Ժողովրդական Կոմիտարիատը:

Հոդ. 9. — Դատավարութիւնը տեղի յե ունենում տվյալ վայրի
քնակչութեան մեծամասնութեան լեզվով: Յեթե կողմերը, վկաները
կամ փորձագետները չգիտեն այն լեզուն, վորով կատարվում ե
տվյալ գործի դատավարութիւնը, դատարանը պարտավոր ե

Թարգմաններ հրավիրելու և շահագրգռված անձանց թարգմանի միջոցով իրազեկ անել դատարանի ամեն մի գործողության նկատմամբ:

Հոդ. 10.—Հանցագործության հետեվանքով առաջացած կորուստների վերաբերյալ քաղաքացիական դատը, յեթե ներկայացրած և լուծված չի յեղել գործը քրեական կարգով քննելու ժամանակ, կարող է ներկայացվել առանձին՝ քաղաքացիական գործերի դատավարության կարգով:

Հոդ. 11.—Ինչ վիճակի մեջ ել վոր լինի գործը, կողմերը, դատախազությունը, դատին մասնակցելու թույլատվություն ստացած յերրորդ անձինք և նրանց փոխանորդները կարող են նայել իսկական գործը, քաղվածքներ անել ու գործում յեղած թղթերի և փաստագրերի պատճեններն ստանալ՝ հատուցանելով դրոշմատուրքն ու դիվանական ծախքերը սահմանված չափով:

Գ Լ ՈՒՄ II

ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Հոդ. 12.—Կողմերը գործ կարող են վարել դատարանում անձամբ կամ իրենց փոխանորդների ձեռքով: Յեթե դատարանն անհրաժեշտ է համարում դատախազի մասնակցությունը, նրա մասնակցությունը պարտադիր է:

Հոդ. 13.—Այն անձանց գործերի վերաբերմամբ, վոր անգործունակ են յայտարարված կամ վորոնց գործունակությունը սահմանափակված է որևէ գործում (Քաղաքացիական Որենսգրքի հոդ. հոդ. 7. 8 և 9), դատապահանջները ներկայացվում են նրանց որինական ներկայացուցիչների կողմից կամ նրանց որինական ներկայացուցիչներին:

Հոդ. 14.—Կողմերի պնդումները (պետական հիմնարկությունները, պետական ձեռնարկությունները, կոոպերատիվները, ընկերությունները, միություններն ու այլ խմբակցությունները) դատեր են սկսում և պատասխան են տալիս որեւոր կամ իրենց կանոնադրությամբ սահմանված մարմինների միջոցով:

Հոդ. 15.—Փոխանորդությունը դատարանում կարող է լինել ա) կողմի հոժարակամ ընտրությամբ, բ) որինական փոխանորդություն անգործունակների, գ) փոխանորդություն Քաղաքացիական

Վիճակի Ակտերի Որենսգրքի 223 հոդվածի կարգով և դ) փոխանորդութիւն Քաղաքացիական Որենսգրքի 16 հոդ. համաձայն:

Հոդ. 16.—Կողմերի փոխանորդ կարող են լինել ա) պաշտպանների կողմագիտյի անդամները, բ) արհեստակցական միւթյունների լիազօրները՝ նրանց անդամների գործերի համար, գ) կողեկտիվների ղեկավարներն ու մշտական աշխատակիցները՝ իրենց կողեկտիվի գործերի համար, դ) այն անձինք, վորոնց՝ գործը քննող դատարանը թույլ ե տվել փոխանորդ լինել տվյալ գործի համար:

Հոդ. 17.—Կողմերի փոխանորդները պիտի ունենան պատշաճ լիազօրութիւններ, վոր տալիս ե կողմը կամ դատարանում բերանացի՝ արձանագրության մեջ մուծելով, կամ սահմանված կարգով վավերացրած հատուկ փոխանորդագրով: Նոտարական վավերացման փոխարեն բանվորներն ու ծառայողները գործ վարելու համար տված փոխանորդագիրը կարող են վավերացնել տալ իրենց հիմնարկության կամ ձեռնարկության մեջ, կարմիր զինվորներն՝ իրենց զորամասերում, աշխատավոր հոգոգտագործողները՝ գյուղական խորհուրդներում:

Հոդ. 18.—Լիազօրութիւնն իրավունք ե տալիս փոխանորդին բոլոր դատավարական գործողութիւթները կատարելու, բացի գործը հաշտությամբ վերջացնելուց, վեճը միջնորդ դատարանի հանձնելուց, դատական պահանջներ ձանաչելուց, նրանցից ամբողջովին կամ մասնակի հրաժարվելուց, լիազօրութիւնն ալ անձի փոխանցելուց և գույք կամ զրամ ստանալուց: Փոխանորդի հիշյալ իրավունքները հատկապես հիշատակված պիտի լինին լիազօրութիւնների մեջ: Կեղծիքի մասին վեճ կարելի ե ոկսել միայն տվյալ գործի համար ստացած հատուկ լիազօրության հիման վրա:

Հոդ. 19.— 13-րդ հոդվածով նախատեսված գործերի համար լիազօրութիւն են տալիս որինական ներկայացուցիչները, իսկ 14 հոդ. նախատեսված գործերի համար՝ կողեկտիվների որենքով կամ կանոնադրությամբ սահմանված մարմինները:

Հոդ. 20.—Կողմերի փոխանորդ չեն կարող լինել. ա) 18 տարին չլրացած անձինք, բ) այն անձինք, վորոնց անձնական և հասարակական իրավունքները դատական վճռով սահմանափակված են՝ սահմանափակման ամբողջ ժամանակի ընթացքում, գ) խնամակալության տակ գտնվողները, դ) պաշտպանների կողմագիտից արտաքսվածները, յե) ժողովրդական դատավորները, դատարանի

անդամները, քննիչները և դատախազները, վերջինները՝ բացի այն դեպքերից, յերբ նրանք գործին մասնակցում են Քաղաքացիական Դատավարութեան Որենսգրքի 2, 12 և 172 հոդվածների կարգով:

Գ Լ Ո Ի Խ III

ԳԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հոդ. 21.— Ժողովրդական դատավորից ու յերկու ատենակալից կազմված ժողովրդական Դատարանի իրավասութեանն են վերաբերում քաղաքացիական փոխհարաբերութեանից առաջացած բոլոր գործերը, բացի 22, 23 և 24 հոդվածներով նախատեսնվածներից:

Հոդ. 22.— Ժողովրդական դատավորը միանձնաբար քննում և դատական հրամաններ տալուն վերաբերյալ և մասնավոր դատավարութեան կարգով քննվող գործերը, բացի կրոնական համոզմունքների հիման վրա գինժորական ծառայութեանից ազատելուն վերաբերյալ գործերից, վոր Հ. Ս. Ս. Հ. Գլխավոր Դատարանի իրավասութեանն են յենթակա (հոդ. հոդ. 226-330), և նոտարների գործողութեանց դեմ տրվող զանգամանքից:

Հոդ. 23:— Հ. Ս. Ս. Հ. Գլխավոր Դատարանի քաղաքացիական բաժինը քննում և. ա) այն դատապահանջները, վորոնց զինը 500 վոսկի ուրբուց ավելի յե, բ) պետական որդանների կամ պաշտոնյաների դեմ սկսված դատապահանջները՝ վարչական կարգով ապուրինի կամ անկանոն գործողութեաններ կատարելու հետևանքով հասցրած վնասների, այլև անկանոն կերպով խլած կամ ոտարացրած գույքը վերադարձնելու մասին, գ) ամբողջ գավառական գործադիր կոմիտեի կամ գավառական քաղաքի ամբողջ քաղաքային խորհրդի (և վոչ նրանց բաժինների) դեմ հարուցված դատապահանջները, դ) ընկերութեան պայմանագրից, հեղինակի իրավունքից, արդյունաբերական գյուտի, սպրանքի ու գործարանական նշանների, կադատարների և ֆիրմաների իրավունքից ծագող դատապահանջները:

Հոդ. 24.— Գերագույն Դատարանի քաղաքացիական դատական կոլլեգիայի իրավասութեանը յենթակա յեն ամբողջ ժողովրդական կոմիտարիատների կամ ժողովրդական կոմիտարիատների հավասարեցրած կենտրոնական հիմնարկութեանների (և վոչ նրանց բաժինների ու վարչութեանների) դեմ հարուցված դատապահանջները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գերագույն Դատարանը վորոշ գործեր կամ վորոշ կարգի գործեր կարող ե հանձնել ի քննություն Հ. Ս. Խ. Հ. Գլխավոր Դատարանին, ի նկատի ունենալով կողմերի գտնված տեղն ու այլ հանգամանքներ:

Հոդ. 25.—Դատապահանջները ներկայացվում են այն դատարանին, վորի շրջանում գատակիրը մշտապես ապրում ե կամ մշտական գրադմունք ունի:

Հոդ. 26.—Այն դատակրի դեմ, վորի բնակատեղին հայտնի չե, դատապահանջները ներկայացվում են ըստ գույքի գտնված տեղի ե կամ մշտական բնակության կամ գրադմունքի վերջին հայտնի տեղի, դատակրի բնակության կամ գրադմունքի վերջին հայտնի տեղը համեմայն դեպս ճշտությամբ ստուգված պիտի լինի:

Հոդ. 27.—Յուրեկտիֆիկացիոն դեմ դատերը ներկայացվում են ըստ պատասխանատու որդանի գտնված տեղի (հոդ. 14) կամ տեղական որդանի գտնված տեղի, յեթե դատը ծագել ե այդ տեղական որդանի հետ կնքված գործարքից:

Հոդ. 28.—Այդպիսի պայմանագրերից ծագող դատերը, վորոնց մեջ վորոշված ե կատարման վայրը, կամ վորոնց կատարումը, իրենց ելության համեմատ, կարող ե տեղի ունենալ միայն վորոշ վայրում, կարող են ներկայացվել պայմանագրի կատարման տեղի դատարանին:

Հոդ. 29.—Շենքերի, հողամասերի, ձեռնարկությունների իրավունքի մասին, գույք դատական կատարածուի ձեռքով ցուցակագրելուց ե վաճառելուց ազատելու մասին, սեպհականատիրոջ մահից հետո մնացած գույքի համար դատապահանջները ներկայացվում են այդ գույքի կամ նրա հիմնական մասի գտնված տեղի դատարանին:

Հոդ. 30.—Յեթե գործը յենթակա յե մի քանի դատարանի, նրանցից մեկն ընտրելու իրավունքը պատկանում ե պահանջատիրոջը:

Հոդ. 31.—Յեթե Ժողովրդական Դատարանը գործը յուր իրավասության յենթակա չե համարում, վերադարձնում ե իրեն տված խնդիրքը հարկից թղթերի ու յուր վորոշման պատճենի հետ միասին՝ պատշաճ դատարանին ներկայացնելու համար: Իր իրավասության յենթակա չլինելու պատճառով դատարանի խնդիրքը չընդունելու մասին կայացրած վորոշման դեմ թույլ ե տրվում

մասնավոր գանգատ առլ Հ. Ս. Խ. Հ. Գլխավոր Դատարանին (սույն Արենսգրքի հոդ. 249):

Հոդ. 32.—Գերագույն Դատարանը, գործի առանձին հանգամանքներն աչքի առաջ ունենալով, կարող ե վորոշումն անել, կողմերից մեկի խնդիրքով կամ յուր նախաձեռնությամբ, գործն այլ դատարանի հանձնելու մասին:

Հոդ. 33.—Դատարանների միջեւ իրավասության մասին վեճ թույլ չի տրվում:

Գ Լ Ո Ւ Խ IV

Պ Ա Տ Ա Կ Ա Ն Ժ Ա Խ Ք Ե Ր

Հոդ. 34.—Գործը վարելու դատական ծախքերն են. ա) դատական տուրքը, բ) դրոշմատուրքը, գ) դիվանական տուրքը, դ) դատավարության ծախքերը:

Հոդ. 35.—Յուրաքանչյուր սկզբնական և հակադարձ դատախնդրքից դատական տուրք ե գանձվում,--յեթե դատապահանջի գինն ե 10-ից մենչև 50 վոսկի ուրբլի՝ նրա գնի 1% -ը, 50-ից մինչև 500 վոսկի ուրբլի՝ 2% և յեթե 500 ուրբլուց ավելի յե՝ 3%: Դատարանի վճռի դեմ տրվող յուրաքանչյուր վճռաբեկ դանգատից դատական տուրք ե գանձվում հիշյալ կողարների կիսի չափով, վոր առնվում ե գանգատի մեջ նշանակված գումարից: 10 ուրբլուց պակաս գնահատված, այլեւ ստացվածային բնույթ չունեցող պահանջները դատական տուրքից ազատվում են:

Հոդ. 36.—Դատապահանջի գինը վորոշվում ե. ա) դրամական գումարներ պահանջելու ե գույքի վերաբերյալ դատապահանջների մեջ պահանջվող գումարովը կամ պահանջվող գույքի արժեքովը, վոր սկզբից վորոշում են պահանջատերերը, բ) միջանի անկախ դատական պահանջներից բաղկացած դատերի մեջ՝ բոլոր պահանջների ընդհանուր գումարով, գ) պարբերական հատուցումների ու վճարների վերաբերյալ դատապահանջների մեջ՝ բոլոր վճարների ու հատուցումների միացյալ գումարով, դ) չքավոր և անաշխատունակ ծնողներին, զավակներին և ամուսնուն ապրուստ տալու վերաբերյալ դատապահանջների մեջ, մի տարվա վճարների ու հատուցումների միացյալ գումարով, անորոշ ժամանակով կամ ցմահ տրվելիք վճարների ու հատուցումների վերաբերյալ դատապահանջների մեջ՝ յերեք տարվա միա-

ցյալ գումարով, յե) վարձակալական պայմանագրի ուժը կարճելու կամ յերկարելու վերաբերյալ դատապահանջներ լինելով պայմանագրի մնացած ժամանակի համար հասանելիք վարձագրամի գումարով:

Հոդ. 37.—Դատապահանջի գինը ցույց է տալիս պահանջատերը: Յեթե ցույց տված գնի անհամապատասխանությունը պահանջի արժեքին ակներև է, դատապահանջի գինը վորոշում է դատարանը:

Հոդ. 38.—Այն դատապահանջների համար, վորոնց գնահատություններ դժվար է լինում դատը սկսելիս, դատական տուրքի չափը նախապես վորոշում է դատարանը, բայց այն 10 ուսուրուց պակաս չի կարող լինել. տուրքի պակասը գանձվում է հետո՝ դատապահանջի գնի համեմատ, վոր դատարանն է վորոշում գործը վճռելիս: Մասնավոր դատավարության կարգով քննվող գործերի համար դատական տուրքը գանձվում է դատարանի հայեցողությամբ, բայց վոչ ավելի քան 2 վոսելի ուսուրի:

Հոդ. 39.—Դատական պահանջների նվազեցման դեպքում վճարված տուրքը չի վերադարձվում: Դատապահանջն ավելացնելու դեպքում տուրքի պակասորդ գումարը վճարվում է ավելացրած պահանջ հայտնելու հետ միաժամանակ: Դատարանիցն է կախված պետական հիմնարկություններից տուրք գանձումն հետաձգել:

Հոդ. 40.—Դրոշմատուրքը գանձվում է դրոշմատուրքի կանոնադրության համաձայն:

Հոդ. 41.—Կողմերի խնդիրքով տրվող բոլոր պատճենների, տեղեկությունների, թերթերի, վկայականների, արձանագրությունների և այլ փաստաթղթերի համար դիվանական տուրք է գանձվում ամեն մի յերեսին 10 վոսկի կոպեկի չափով: Այն թղթերը, վորոնց համար այս տուրքը վճարված է, հնդհանուր դիվանական տուրքի յենթակա չեն:

Հոդ. 42.—Դատարան կանչված վկաներն իրավունք ունին աշխատավարձ ստանալու իրենց ծառայության կամ աշխատանքի տեղից. Գործից հետ քցելու համար վարըստություն ստանալ ցանկացող վկան պետք է այդ մասին հայտնե դատարանին հարցաքննությունից հետո: Վարձատրության չափ սահմանում է դատարանը, բայց այդ վարձատրությունը տվյալ վայրի միջին աշխատավարձիցն ավելի պիտի չլինի: Յեթե վկան տվյալ դատարանի

շրջանից դուրս եւ ապրում, նրան հատուցվում եւ նաեւ ճանապարհածախք:

Հոդ. 43.—Դատական տուրքը և այլ տուրքերն ու ծախքերը գործի համար չեն գանձվում. ա) պետական մարմիններից և արդյունաբեր գրադման հարկից ազատ պետական ձեռնարկություններից, բ) ամեն տեսակ աշխատավարձի և ապրուստի միջոցների պահանջ ներկայացնողներից, գ) այն աշխատավորներից, վորոնց ժողովրդական դատավորը կամ գործը քննող դատարանը դատական տուրք վճարելու բավական միջոցներ չունեցող են ճանաչել:

Հոդ. 45.—Փորձագետի վարձատրությունը վորոշում եւ դատարանը նրան կանչելիս:

Հոդ. 45.—Կողմերի, վկաների, փորձագետների դատակոչի, կոչնագրեր ուղարկելու ծախքերի, փորձագետների վարձատրության, փորձագետների և դատարանի տեղական զինության նըպատակով արած ճանապարհածաքի համար անհրաժեշտ գումար ները վճարում եւ առաջուց այն կողմը, վոր խնդրել եւ դատակոչի կամ տեղական զինության մասին: Յեթե դատակոչը կամ զինության վայրն ուղեվորվելը տեղի չե ունենում դատարանի նախաձեռնությամբ, փող վճարում են առաջուց յերկու կողմերն ի՞նչ հավասար չափով:

Հոդ. 46.—Դատական տուրքը, այլ և գործի համար դատակոչող կողմի արած բոլոր մյուս ծախքերը պետք ե գանձվեն պատասխարատու կողմից՝ դատարանի վճռով բավարարված դատական պահանջների համեմատական չափով: Դատակիրն յեվս իրավունք ունի յուր արած ծախքերի հատուցումը պահանջելու՝ դատական պահանջի դատարանի կողմից մերժված մասի համեմատական չափով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բացի գործ համար վճարած դատական և այլ տուրքերից՝ գործը արած կողմն իրավունք ունի պահանջելու յուր փոխանորդին վարձատրելու համար արած ծախքերի հատուցումը, յեթե փոխանորդը գործին մասնակցել եւ դատական պահանջի այն մասի 50/100-ի չափով, վորի նկատմամբ կողմի ոգտին վճիռ ե կայացել:

Հոդ. 47.—Քաղաքացիական գործերի դատավարության համար դատարանի արած ծախքերը, մասնավորապես վկաների ու փորձագետների դատակոչի և փորձաքննության համար արվածները, պիտի գանձվին իբրեւ պետության հատույթ յուրաքանչյուր

կողմից՝ դատական պահանջի այն մասի համեմատական չափով, վորի նկատմամբ տվյալ կողմի դեմ վճիռ և կայացել:

Հոդ. 48.—Յեթե դատարանն անկանոն և զնահատել դատապահանջը և սխալ և հաշվել սահմանված տուրքերը, այդպիսի վորոշման դեմ կարելի չե մատնավոր գանդատ տալ (հոդ. 249):

Գ Լ ՈՒՒ V

Տ ՈՒԳԱՆՔՆԵՐ

Հոդ. 49.—Յեթե դատարանի կողմից կանչված վկան չներկայանա այնպիսի պատճառներով, վոր դատարանը հարգելի չի համարել, նա յենթարկվում և տուգանքի՝ առաջին անգամ—3-ից մինչև 10 վոսկի ուրբի, ի նկատի ունենալով վկայի նյութական վիճակը, յերկրորդ անգամ՝ հակադիր կարգով բերել տալու և կրկնակի չափով տուգանքի:

Հոդ. 50.—Յեթե վկան վկայություն տալուց հրաժարվի այնպիսի պատճառներով, վոր դատարանը հարգելի չհամարե, յենթարկվում և տուգանքի՝ 10-ից մինչև 50 վոսկի ուրբի:

Հոդ. 51.—Իրաակ անձը, յեթե դատարանին չներկայանա կամ յեզրակացություն տալուց հրաժարվի այնպիսի պատճառներով, վոր դատարանը հարգելի չհամարե, յենթարկվում և տուգանքի՝ 2-ից մինչև 10 վոսկի ուրբի:

Հոդ. 52.—Գործին չմասնակցող յերրորդ անձինք, յեթե հրաժարվեն իրենց ունեցած փաստաթղթերը դատարանի պահանջով ներկայացնելուց, յենթարկվում են տուգանքի՝ 10-ից մինչև 50 վոսկի ուրբի:

Գ Լ ՈՒՒ VI

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՅՆԵՐԸ

Հոդ. 53.—Դատավարության մեջ ժամանակամիջոց նշանակում և դատարանը այն դեպքերում, յերբ որենքով չե սահմանված:

Հոդ. 54.—Որենքով վորոշված կամ դատարանի կողմից նշանակված ժամանակամիջոցները հաշվում են ամիսներով, շաբաթներով և օրերով:

Հոդ. 55.—Ամիսներով հաշված ժամանակամիջոցը լրանում և

վերջին ամսի համապատասխան թվին: Յեթե ամիսներով հաշվող ժամանակամիջոցի վերջն ընկնում է այնպիսի ամսի, վոր համապատասխան թիվ չունի, այդ դեպքում ժամանակամիջոցը լրանում է այդ ամսի վերջին օրը:

Հոդ. 56.— Յեթե ժամանակամիջոցը հաշվում է շաբաթներով, ժամանակամիջոցը լրանում է վերջին շաբաթի համապատասխան օրը: Յեթե ժամանակամիջոցը հաշվում է օրերով, ժամանակամիջոցի սկիզբը պետք է հաշվել հաջորդ օրվանից:

Հոդ. 57.— Յեթե ժամանակամիջոցի վախճանը վոչ աշխատանքի օր է գալիս, ժամանակամիջոցի շերջին օրն է համարվում հաջորդ աշխատանքի օրը:

Հոդ. 58.— Ժամանակամիջոցի վախճանական օրը տևում է մինչև զիջերվա 12 ժ., բայց յեթե այդ ժամանակի ընթացքում կարիք լինի վոր և է գործողութուն կատարելու դատարանում, վորտեղ պարապմունքներն ավելի վաղ են ավարտվում, այդ դեպքում ժամանակամիջոցը լրանում է այդ պարապմունքները դադարեցնելու վայրկյանին:

Հոդ. 59.— Ժամկետը բաց թողած չի համարվում, յեթե գանգառը կամ դատարանի պահանջած թուղթը փոստին է հանձնված ժամանակը լրանալուց առաջ:

Հոդ. 60.— Դատավարության կասեցման հետ միասին կանգ են առնում նրան վերաբերյալ ընդ որ ընթացիկ, բայց դեռ չլրացած ժամանակամիջոցները: Ժամանակամիջոցների կասեցումն սկսվում է այն պարագայից, վորի հետևանքով դադարեցրած է դատավարությունը:

Հոդ. 61.— Դատարանի նշանակած ժամանակամիջոցները շահագրգռված կողմի խնդիրքով կարելի չէ յերկարել:

Հոդ. 62.— Դատարանը կարող է վերականգնել օրենքով սահմանված կամ դատարանի կողմից նշանակված ժամանակամիջոցը՝ բաց թողած կողմի համար, յեթե բաց թողնելու պատճառները հարգելի համարե:

Հոդ. 63.— Բաց թողած ժամանակամիջոցը վերականգնելու հարցը լուծում է՝ կողմերին կանչելով, այն դատարանը, վորտեղ պիտի կատարվի ժամանակամիջոցը բաց թողած գործողութունը կամ վորին թուղթը պիտի արվեր:

Հոդ. 64. — Ժամանակամիջոցը վերականգնելու ժամին խնդիր տալու հետ միաժամանակ պետք ե կատարվի այն գործողութիւնը, կամ տրվի այն թուղթը, վորոնց վերաբերմամբ միջնորդութիւն ե հարուցվում:

Հոդ. 65. — Այն թղթերը, վոր տրվում են սահմանված ժամանակը լրանալուց հետո, թողնվում են առոնց քննութիւն:

Գ Լ ՈՒ Բ VII.

ԴԱՏԱԿՈՉ ՅԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՅԼ ԺԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԸ

Հոդ. 66. — Դատարանի ծանուցումները տեղ են հասցնվում ապահովյալ ծրարով ե վերադարձնելիք ստացազրով կամ սուրհանգակներէ ձեռքով. թույլ ե տրվում դատարանի ծանուցումների հանձնումը միլիցիայի ձեռքով կամ պատշաճ դավառակային գործադիր կոմիտեի միջոցով. այս յեղանակով ծանուցումն հանձնելու դժվարութեան դեպքում, այն կարելի յե տալ դատվողին՝ մյուս կողմին հանձնելու համար:

Հոդ. 67. — Դատարանի բոլոր հաղորդակցութիւնը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան սահմաններից դուրս գտնվող անձանց ու հիմնարկութիւններին հետ տեղի յե ունենում Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիտարիատի միջոցով:

Հոդ. 68. — Դատարանի կոչնագրերը պիտի պարունակեն. ա) դատարանի անունը. բ) նիստի տեղի ու ժամանակի մասնանշումը, այլեւ կողմերի ու գործի, վորի համար դատակոչը տեղի յե ունենում, գ) առաջարկութիւն գործի վերաբերյալ բոլոր ապացույցները ներկայացնելու մասին ե դ) դատարանին չներկայանալու հետեանքների մասնանշումը:

Հոդ. 69. — Դատարանի կոչնագրերն ու ծանուցումները հանձնվում են կանչվողներին անձամբ: Հանձնելու թվականը նշանակվում ե հանձնվող ծանուցման դատարանին վերադարձնելիք կտրոնի վրա:

Հոդ. 70. — Յեթե կոչնագիրը տեղ հասցնող պաշտոնյան չկարողանա տեսնել դատարան կանչվողին, կոչնագիրը նա հանձնում ե ընտանիքի նրա հետ միասին ապրող անդամներից մեկին, տան կամ այն հիմնարկութեան վարչութեանը, վորտեղ ծանուցումն ստացող անձը մշտապես ապրում ե կամ մշտական գրադմունք ունի:

Հոդ. 71.—Յեթե այն անձը, վորին դատարանի ծանուցումը պիտի հանձնվի, հրաժարվի այն ընդունելուց, տեղ հասցնող այդ ժամին հիշատակություն և անում կտրոնի վրա.

Հոդ. 72. | Դատակրի իսկական բնակատեղին հայտնի չլինելու դեպքում, դատարանը գործը լսում և, յերբ դատարանումն ստացվում և կոչնագրի պատճենը՝ դատակրի բնակության վերջին հայտնի տեղին տնային վարչության մակագրությամբ այն ժամին, թե ինքը (տնային վարչությունը) կոչնագիրն ստացել և:

Հոդ. 73.—Դատարանի ծանուցումը պատշաճ անձին ուղարկվում և կողմից ցույց տված հասցեով:

Հոդ. 74.—Դատ վարդները իրենք են պարտավոր տեղեկություն տալ դատարանին, յեթե գործի ընթացքումն իրենց հասցեն փոխել են: Յեթե այդպիսի տեղեկություն չի տրված, կոչնագիրն ուղարկվում և դատարանին հայտնի վերջին հասցեով, վորով կոչնագրերն հանձնվել են, և հասցրած և համարվում, նույնիսկ յեթե հասցետեղն այլևս այն հասցեով ապրելիս չլինի.

Մ Ա Ս Ն Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ .

ԴԱՏԱՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Գ Լ ՈՒ Խ VIII.

ԴԱՏԱՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՅՆՆԵՐԸ

Հոդ. 75.—Դատարանը քաղաքացիական գործի քննության ձեռնարկում և զրավոր դիմումի հիման վրա, բերանացի դիմուժը թույլ և տրվում միայն ժողովրդական դատարանում վարվող գործերի նկատմամբ:

Հոդ. 76.—Դատապահանջի մասին տրվող դիմումը պիտի պարունակե. ա) պահանջատիրոջ, այսինքն դատապահանջ ներկայացնող անձի ճիշտ անունը, այլ և նրա փոխանորդի, յեթե վերջինս և հայտագիր տվողը. բ) դատակրի, այսինքն՝ դատապահանջի համար պատասխանատվության կանչվող անձի ճիշտ անունը. գ) պահանջատիրոջ և նրա փոխանորդի ու դատակրի մշտական բնակավայրի կամ մշտական գրադմուքի վայրի ճիշտ մատնանշումը. դ) դատապահանջի հիմք ծառայող հանգամանքները և դատապահանջը հաստատող ապացույցները. ե) պահանջատիրոջ պահանջը և դատապահանջի գինը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Սույն հոդվածում «անձ» տառով հասկացվում են թե ֆիզիքական և թե իրավական անձինք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Փոխանորդի տված դատապահանջի դատախնդիրներին կցվում է փոխանորդագիր կամ լիազորագիր (հոդ. 17.)

Հոդ. 77. — Բերանացի դիմումը ժողովրդական դատավորը կամ նրա հանձնարարութեամբ քարտուղարը՝ մայնում է արձանագրութեան մեջ և կարդում է պահանջատիրոջը, արձանագրութեւնն ստորագրում են դատավորն ու դիմողը:

Հոդ. 78. — Գլխավոր Դատարանում և Գերագույն Դատարանում քննվելիք գործերի համար դատապահանջի դատախնդիրներն ու բոլոր փաստաթղթերը ներկայացվում են՝ հակառակ կողմից մասնակցողների թվով պատճենների հետ միասին, վոր վավերացնում է ինքը կողմը: Այդ պատճենները դատարանը հանձնում է հակառակ կողմին առաջին կոչնադրի հետ միասին:

Հոդ. 79. — Գործի համար ներկայացված իսկական փաստաթուղթը կարելի չէ հետ վերցնել՝ գործի մեջ թողնելով պատճենը, վոր պետք է վավերացրած լինի ներկայացնող կողմը: Այսպիսի դեպքում դատապահանջի հիմք ծառայող փաստաթղթի իսկականի վրա պետք է մակագրութեւն արվի այն մասին, թե նրա հիման վրա դատապահանջի գործ է սկսված, իսկ փաստաթուղթը գործի վախճանից հետո ստացվելու դեպքում՝ նաև այն մասին, թե գործի վերաբերմամբ ինչ վճիռ է կայացել:

Հոդ. 80. — Դատարանը պահանջատիրոջ խնդիրքով կարող է դատակրին կանչելուց առաջ բավարարել մասնավոր խնդիրները վկաներ կանչելու, փաստաթուղթ կամ տեղեկութեւն ստանալու համար վկայական տուլու մասին կամ պահանջել այդպիսի փաստաթղթեր ու տեղեկութեւններ և այլն, յեթե նրանց բնույթն այնպես է, վոր առարկութեան չեն կարող հանդիպել դատակրի կողմից և անհրաժեշտ են գործի լուծման համար:

Հոդ. 81. — Դատախնդիրը մնում է առանց ընթացքի, յեթե պահանջված չեն 76 և 78 հոդ. պահանջները և յեթե նրանց համար դատական տուրք և դրոշմատուրք չի վճարված, վորի մասին դատարանն տեղեկացնում է պահանջատիրոջը և ժամանակ է տալիս նրան թերութեւնները լրացնելու համար: Յեթե դատախնդրի թերութեւնները նշանակված ժամանակին լրացրած չլինին, դատախնդիրը համարվում է չտված:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հակադարձ դատախազի բոլոր թերությունները պետք է լրացրած լինին վոչ ուշ քան դործը լսելու համար նշանակված ուրը. հակառակ պարագային ներկայացրած հակադարձ դատապահանջը ավյալ դատավարության ընթացքում քննության չի առնվում:

Գ Լ ՈՒՄ IX

ԴԱՏԱՊԱՀԱՆՋԻ ԱՊԱՆՈՎՈՒՄԸ

Հոդ. 82.— Գործի ամբողջ ընթացքում, քանի դեռ վճիռ չի կայացրած, պահանջատերը կարող է խնդրել, վոր յուր դատապահանջն ապահովվի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ամեն կարգի պետական հիմնարկությունների ու պետական ձեռնարկությունների դեմ ներկայացրած դատապահանջներն ապահովության յենթակա չեն:

Հոդ. 83. Դատապահանջի ապահովումը թույլ է տրվում. ա) յերբ դատապահանջը ներկայացրած փաստաթղթերով բավականաչափ հիմնավորված է յերևում, բ) յերբ դատապահանջի ապահովության համար միջոցներ ձեռք չառնելը պահանջատիրոջ համար անհնարին կարող է դարձնել բավարարություն ստանալը, կամ յերբ նույնիսկ պահանջի բնույթն այնպես է, վոր հապաղումը վճռի կատարումը պիտի դժվարացնե կամ անկարելի դարձնե:

Հոդ. 84.— Դատարանը՝ ապահովումը թույլ տալով, կարող է պահանջել պահանջատիրոջից, վոր նա ել յուր կողմից ապահովե դատակրին հնարավոր վնասներից:

Հոդ. 85.— Դատարանը կարող է կամ ամբողջ պահանջն ապահովել կամ միայն այն մասերը, վոր ինքը բավականաչափ հիմնավորված կը համարե:

Հոդ. 86.— Դատապահանջների ապահովության մասին տրվող խնդիրները լուծում է ժողովրդական դատավորը կամ դործ քննող դատարանը՝ միևնույն ուրը, առանց հակառակ կողմերին կանչելու:

Հոդ. 87.— Դատապահանջն ապահովվում է դատակրին պատկանող՝ յուր կամ կողմնակի անձանց մոտ յեղած գույքի վրա արգելք դնելով:

Հոդ. 88.— Պետական հիմնարկության կամ պետական ձեռնարկության դեմ հարուցված դատապահանջն ապահովելիս դատարանը կարող է թույլ տալ, վոր պահանջատերը յուր ներկայացու-

ցիշը նշանակե ձեռնարկության կանոնավոր ընթացքի վրա հակելու համար:

Հոդ. 89.—Գատարանը՝ կողմերից մեկի խնդիրքով և հակառակ կողմի առարկությունը նկատի առնելով, կարող է ապահովության մի ձևն այլ ձևով փոխարինել, այլև ապահովության մի քանի ձև թույլ տալ այն պայմանով, վոր նրանց ընդհանուր գումարը դատապահանջի գումարիցն ավելի չլինի: Դրամական պահանջի ապահովության դեպքում դատակիրը դատարանի թույլ տված ապահովության փոխարեն կարող է իբրև դատական ավանդ տալ այն պահանջի գումարը:

Հոդ. 90.—Դատապահանջների ապահովության վերաբերյալ վորոշումներն ի կատար են ածվում դատական վճիռների կատարման համար սահմանված կարգով:

Հոդ. 91.—Դատապահանջների ապահովության գործի վերաբերմամբ դատարանի կայացրած վորոշումների դեմ կարելի չե դանդատ տալ մասնավոր կարգով (հոդ. 249), յեթե վորոշումը տեղի չե ունենում զանգատավորի բացակայությամբ և այդ դեպքում 249 հոդ. նախատեսված պայմանաժամի ընթացքն սկսվում է դատական կատարածուի ծանուցագիրն ստանալու որից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Դանդատ տալը գործի հետագա քննությանն արգելք չի հանդիսանում:

Հոդ. 92.—Դանդատ տալը չի կասեցնում ապահովության մասին կալացած վորոշման ի կատար ածելը: Ապահովության համար ձեռք առած միջոցը վերացնելու մասին կալացած հետագա վորոշման դեմ պահանջատիրոջ տված զանգատը կանգնեցնում է այդ վորոշման կատարումը:


Հոդ. 93.—Այն դատակիրը, վորի ոգտին վճոված է գործը, կարող է պահանջել պահանջատիրոջից դատապահանջի ապահովությամբն իբրև պատճառած փոխաները:

Գ Լ ՈՒ Խ X.

ԳՈՐԾԻ ԳԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդ. 94.—Գործի դատաքննությունը կատարվում է զոնրաց և բերանացի:

Հոդ. 95.—Եթե գործի արգելանքներին խայելով զոնրաց



դատարանութիւնը ցանկալի չլինի հասարակաց շահի պահպանութեան տեսակետից, այլև յեթե գործի հանգամանքները կողմերից մեկի ինտիմ կյանքն են շոշափում, դատարանը յուր նախաձեռնութեամբ կամ կողմերի խնդիրքով կարող ե վորոշ գործը կամ նրա վորոշ մասերը քննել դռնփակ նիստում:

Հոդ. 96. — Գործը դռնփակ նիստում լսելու դեպքում դատարանը թույլ ե տալիս նիստին ներկա լինելու միայն կողմերին ե նրանց փոխանորդներին, վկաներին ու փորձագետներին: Դատարանի վճիռն համենայն դեպս հայտարարվում ե դռնբաց:

Հոդ. 97. — Գործի քննութիւնն սկսելիս դատարանը պարզում ե, թե դատարան կանչվածներից ով ե յեկել ե ինչ տեղեկութիւններ կան մնացյալների չգալու պատճառների մասին:

Հոդ. 98. — Այն կողմերի չգալը, վորոնց կոչնագիր հանձնված լինելը դատարանին հայտնի ե, գործի քննութեան ու վճռահատութեանն արգելք չի հանդիսանում:

Հոդ. 99. — Դատարանը, յեթե չեկած կողմի անձամբ բացատրութիւն տալն անհրաժեշտ ե համարում, հետաձգում ե դատարանութիւնը: Պահանջատիրոջ կամ դատակրի դատակոչը անձամբ բացատրութիւններ տալու համար թույլ ե տրվում ե այն դեպքում: յերբ գործին մասնակցում ե նրանց փոխանորդը:

Հոդ. 100. — Յերբ կողմը յերկրորդ անգամն ե կանչվում բացատրութիւն տալու անհրաժեշտութիւնն իրեն մասնանշելով, ե չի ներկայանում առանց հարգելի պատճառների, գործը վճռվում ե յեղած տվյալների հիման վրա:

Հոդ. 101. — Զբաւոր ե անաշխատունակ ամուսնու ե զավակների համար ապրուստ (պարենագին) պահանջելու ե աշխատավարձի, վերաբերյալ գործերի առթիւ դատարանը կարող ե վորոշումն անել դատակրին բերել տալու մասին, միայն այն դեպքում, յեթե դատարանն անհրաժեշտ համարե նրա անձամբ ներկայանալը նաև յերկրորդ անգամ: Համապատասխան նախազգուշացմամբ կանչելուց հետո:

Հոդ. 102. — Մինչև գործին ըստ ելութեան նայելը կողմերը կարող են հայտարարութիւններ անել գործը տվյալ դատարանում կամ դատարանի տվյալ կազմով քննելու անկարելիութեան մասին:

Հոդ. 103. — Դատարանը կարող ե վորոշել գործը հանձնել այլ դատարանի կամ այլ հիմնարկութեան հետեյալ դեպքերում. ա) յե-

թէ դատարանը գտնուժ ե, վոր տվյալ դատը գործի հանգամանք-ներին նայելով ավելի հարմարությամբ կարող ե վճովել գլխավոր ստուգողական գործողությունները կատարելու վայրում կամ առ-հասարակ այլ գատարանում ե վոչ պահանջաւորոջ ընտրած դատա-րանում (հոգ. 30), բ) յեթե բավարարելի համարվի բնակատեղին անհայտ յեղած (հոգ. 26) դատակրի խնդիրը գործը յուր իսկական բնակության վայրը տեղափոխելու մասին, գ) յեթե ժողովրդա-կան դատավորին հեռացնելուց հետո (հոգ. 104) նրան տվյալ դա-տարանում փոխարինելը զժվարության հանդիպի, դ) յեթե դատա-րանը գործը այլ հիմնարկության (Իրավարար Հանձնաժողով, Հո-ղային Հանձնաժողով և այլն) իրավասության յենթակա համարի:

Հոգ. 164. — Դատավորը կամ ժողովրդական ատենակալը, յեթե շահագրգռված ե գործի յելըովը կամ վորոշ հաւաքերություն-ներ ունի դատվողների հետ, հեռացվում ե գործի քննությանը մասնակցելուց թե կողմերի և թե յուր սեփական հայտարարու-թյան հիման վրա, վոր դատավորը կամ ատենակալը պարտավոր ե անել դատարանին նույն իսկ կողմերի հայտարարությունը չլինելու դեպքում:

Հոգ. 105. — Գործի դատաքննությունն ըստ եյության սկսվում նրանով, վոր դատարանն առաջարկում ե կողմերին բացատրու-թյուններ տալ՝ հիշատակելով իրենց գործին կցած բոլոր ապա-ցույցները:

Հոգ. 106. — Գործի դատաքննությունն սկսելուց հետո կողմերի նոր ապացույցներ ներկայացնելը թույլ ե տրվում միայն այն դեպքում, յերբ դատարանը հարգելի ե համարում ապացույցները ժամանակին չներկայացնելու պատճառները:

Հոգ. 107. — Գործը հետաձգելիս դատարանը ժամանակ ե նշա-նակում ապացույցները ներկայացնելու կամ ստուգելու համար, այլև նոր նիստի որը, յեթե այդ հնարավոր ե:

Հոգ. 108. — Դատարանը գործը բավականաչափ պարզված հա-մարելով, դադարեցնում ե դատախոսությունը և ձեռնարկում ե վճռահատության:

Գ Լ ՈՒՐ XI

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոգ. 109. — Յուրաքանչյուր նիստի և նիստից դուրս կատարված յուրաքանչյուր առանձին դատական գործողութիւյան մասին կազմվում և արձանագրութիւն:

Հոգ. 110. — Արձանագրութիւյան մեջ մասնանշված պիտի լինին նիստի կամ գործողութիւյան տեղն ու ժամանակը, դատարանի կազմը, յեկած կողմերը, գործին մասնակցող անձանց, վկաների և զիտակ անձանց բացատրութիւնները և հայտարարութիւնները ետևութիւնը գործին մասնակցող անձանց մասնավոր խնդիրքները: Նրանց դեմ արված առարկութիւնները և դատարանի վորոշումները, ներկայացրած ապացույցներն ու փաստաթղթերը:

Հոգ. 111. — Արձանագրութիւնները կազմվում են նույն նիստում կամ առանձին գործողութիւն: Կատարելիս՝ նիստից դուրս արձանագրութիւններն ստորագրում են վկաններն ու զիտակից անձինք՝ միայն այն մասերը, վոր իրենց են վերաբերում, իսկ հետո կողմերն ու դատարանը:

Հոգ. 112. — Գործին մասնակցող անձանց թույլ և արվում նայել արձանագրութիւնը, վորի հաստատութիւնից հետո վոչ ուշ քան յերեք որվա ընթացքում նրանք կարող են ներկայացնել իրենց նկատողութիւնները արձանագրութիւյան առթիւ: Նախագահիցն և կախված արձանագրութիւյան մասին արված այս կամ այն նկատողութիւյան առթիւ նրա մեջ պատշաճ փոփոխութիւններ մտցնել:

Գ Լ ՈՒՐ XII.

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՅՈՒՄԸ

Հոգ. 113. — Դատարանը պարտավոր և կասեցնել դատավարութիւնը. ա) դատվողներից մեկի մահվան դեպքում, բ) դատվողներից մեկի վրա խնամակալութիւն հաստատելու կամ դատարանում պահանջ անելու և պատասխան տալու իրավունքի այլ սահմանափակման անհրաժեշտութիւյան դեպքում, գ) գործի մեջ կողմ հանդիսացող իրավական անձի գոյութիւնը վերջանալու դեպքում, դ) դատվողի կարմիր Բանակի գործող մասի մեջ կանչվելու դեպքում, ե) յերբ տվյալ գործը չի կարող վճռվել բաղադրացիական,

քրեական կամ վարչական կարգով քննվող այլ գործի վճռելուց առաջ:

Հոդ. 114.—Դատարանը բացի հիշյալ դեպքերից՝ կարող է կասեցնել դատավարութունը. ա) դատվողների փոխադարձ համաձայնությամբ, բ) դատվողներից մեկի կարմիր Բանակի մեջ կամ այլ ձևի պարտադիր պարհակ կատարելու համար կանչվելու դեպքում:

Հոդ 115.—113 հոդ. ա, բ և գ կետերով նախատեսված դեպքերում դատավարութունը կասեցվում է մինչև դուրս մնացած կողմի իրավահաջորդի կամ որինական ներկայացուցչի գործի մեջ մտնելը կամ հակառակ կողմի նրանց գործի մեջ քաշելը:

Հոդ. 116.—113 հոդ. ա բ և գ կետերում մատնանշված պատճառներով կասեցրած գործերի համար վաղեմության ժամանակամիջոցի ընթացքը (Քաղաքացիական Որենսգրքի 51 հոդ.) սկսվում է դատավարութունը կասեցնելու օրից, իսկ նույն հոդվածի գ կետով նախատեսանված դեպքում՝ կողմի կարմիր Բանակի գործող մասից դուրս գալու օրից:

Հոդ. 117.—Դատավարութունը վերսկսվելու դեպքում դատարանը կողմերին կանչում է ընդհանուր հիմունքներով:

Գ Լ ՈՒՒ XIII.

Ա Պ Ա Յ ՈՒ Յ Յ Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն

Հոդ. 118.—Յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցանել այն հանգամանքները, վորոնց վրա նա հիմնում է յուր պահանջներն ու առարկութունները: Ապացույցները ներկայացնում են կողմերը, բայց դատարանն էլ կարող է յուր նախաձեռնությամբ ապացույցներ հավաքել: Յեթե ներկայացրած ապացույցները բավական չլինին, դատարանը կարող է կողմերին առաջարկել ներկայացնել լրացուցիչ ապացույցներ:

Հոդ. 119.—Կողմերի ներկայացրած այս կամ այն ապացույցները թույլ տալը կախված է նրանից, թե դատարանը գործի համար այդ ապացույցներն եական է համարում թե վրջ:

Հոդ. 120.—Դատարանն է վորոշում, կարելի՞ չէ արդյոք վորոշ հանգամանք ապացույցների կարոտ չհամարել:

Հոդ. 121.—Դատարանը յուր իսկ նախաձեռնությամբ կամ կողմերի խնդրքով կարող է ներկայացրած ապացույցների ստուգ-

ման անհրաժեշտ գործողութիւններ կատարել՝ տեղնուտեղը զննելով, գիտակ անձինք (փորձագետներ) կանչելով, վկաներ կանչելով ու հարցաքննելով և փաստաթղթերն ստուգելով:

Հոդ. 122.—Կողմերին ապացույցների ստուգման մասին տեղեկութիւնն է տրվում նաև այն դեպքում, յերբ այդ կատարվում է դատական նիստի վայրից դուրս: Յեթե գործողութիւնը կատարվում է տվյալ դատարանի շրջանում, կողմերը կանչվում են սովորական կարգով:

Գ Լ ՈՒՒ XIV.

Ա Պ Ա Յ ՈՒ Յ Յ Ն Ե Ր Ի Ա Պ Ա Հ Ո Վ ՈՒ Մ Ը

Հոդ. 123.—Այն անձինք, վոր հիմք ունին վախենալու, թե իրենց համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելը հետազայում անկարելի կամ խիստ դժվար կլինի, կարող են թե գործի դատավարութեան ընթացքում և թե դատապահանջ ներկայացնելուց առաջ խնդրել դատարանից ապահովել այդ ապացույցները:

Հոդ. 124.—Ապացույցների ապահովութեան վերաբերյալ խնդիրքը քննում է այն մշտական ժողովրդական դատավորը, վորի շրջանում տեղի պիտի ունենան ապացույցների ապահովման վերաբերյալ գործողութիւնները:

Հոդ. 125.—Ապացույցների ապահովութեան մասին տրվող խնդիրք պիտի պարունակե. 1) պահանջող ապացույցները ետթիւնն ու ձևը, 2) այն հանգամանքների մատնանշումը, վոր պիտի հաստատվեն այդ ապացույցներով և 3) ապացույցների ապահովումը խնդրելու հիմքը:

Հոդ. 126.—Անհետաձգելի դեպքում, այլև յերբ չի կարելի վորոշել, թե պահանջատերը հետազայումն ում դեմ կարող է դատախազել, ապացույցների ապահովութեան վերաբերյալ խնդիրքները կարող են քննվել և ապացույցների ապահովութիւնը կարող է տեղի ունենալ առանց հակառակ կողմին կանչելու:

Հոդ. 127.—Դատարանն ապացույցների ապահովութիւնը թույլ տալու մասին վորոշումն անելիս՝ ցույց է տալիս նրա մեջ ապահովման կարգն ու յեղանակը: Ժողովրդական դատավորի՝ ապացույցներն ապահովելը թույլ տալու վորոշումների դեմ մասնավոր զանգատ տալ չի կարելի:

Գ Լ Ո Ի Խ XV.

Ա Պ Ա Յ Ո Ւ Յ Յ Ն Ե Ր Ի Ա Ռ Ա Ն Ձ Ի Ն Տ Ե Ս Ա Կ Ն Ե Ր Ը

I. Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Հոգ. 128.—Վկայությունները թույլ են տրվում բոլոր գեպ-
քերում, բացի այն դեպքերից, յերբ որենքը վորոշ գործողու-
թյունների ու հարաբերությունների համար պարտադիր գրավոր
ձև է սահմանում:

Հոգ. 129.—Վոչ վոք դատարանում վկա լինելուց հրաժարվե-
լու իրավունք չունի, բացի այն դեպքերից, յերբ պահանջվող փա-
տեքն հաղորդելը գուցորդված է պետական կամ ծառայության
զաղտնիքների խախտման հետ:

Հոգ. 130.—Յեթե կողմը հայտնում է, վոր վկան շահագրգո-
ված է գործի յելքովը կամ յեթե վորոշ հարաբերություններ կան
վկայի և կողի միջև, դատարանը կարող է թույլ չտալ այդպիսի
վկայի հարցաքննությանը:

Հոգ. 131.—Վկան առաջ բերող կողմը պարտավոր է մատնա-
նշել այն հանդամանքները, վիւր այն վկան պիտի հաստատե, և
հայտնել նրա անունն, ազգանունն ու բնակատեղին:

Հոգ. 132.—Փատարանը վկաներին հարցաքննում ն, ոախա-
զգուշացնելով այն պատասխանատվության մասին, վոր ընկնում է
նրանց վրա սուտ ցուցմունքների համար՝ Քրեական Որենսգրքի
178 հոգ. համաձայն:

Հոգ. 133.—Ամեն մի վկա հարցաքննվում է առանձին:

Հոգ. 134.—Գործի քննության ժամանակ չեն կարող ներկա
լինել նիստի սրահում գեւ ցուցմունքներ չտված վկաները:

Հոգ. 135.—Վկաներին հարցաքննելու հերթը վորոշւում է դա-
տարանի նախագահը:

Հոգ. 136.—Ամեն մի հարցաքննված վկա մինչև բոլոր վկա-
ների հարցաքննությունը վերջանալը պիտի մնա դատարանի նիս-
տում, յեթե դատարանը թույլ չտա նրան ավելի շուտ հեռանալ:

Հոգ. 137.—Վկան կարող է յերկրորդ անգամ հարցաքննվել
միևնույն կամ հետագա նիստում յուր շիմումի հիման վրա, կող-
մերի խնդիրքով կամ դատարանի նախաձեռնությամբ:

Հոգ. 138.—Դատարանը վկաներին կարող է յերես առ յերես
բերել նրանց վկայությանց մեջ յեղած տարաստությունները պար-

դելու համար:

Հոդ. 139.—Գործը քննող դատարանի շրջանից դուրս մշտական բնակություն ունեցող վկաներին հարցաքննում ե նրանց բնակության շրջանի դատարանը, բայց յեթե նրանք ներկայանան գործը քննող դատարանին, թույլ ե տրվում նրանց այնտեղ հարցաքննել:

II. ԳՐԱՎՈՐ ԱՊԵՅՈՒՅՑՆԵՐ

Հոդ. 140.—Գրավոր ապացույցները, այն ե՝ ամեն տեսակ գրավոր ակտեր, փաստաթղթեր, գործի ե մասնավոր բնույթ ունեցող զրազրություն դատարանին ներկայացնում են կողմերն իրենք կամ կարող ե պահանջել դատարանը:

Հոդ. 141.—Այն կողմը, վոր դատարանի միջոցով մյուս կողմից կամ գործին չմասնակցող անձերից փաստաթուղթ ներկայացնել ե պահանջում, պետք ե մանրամասն վորոշե յուր պահանջած փաստաթուղթը ե ցույց տա, թե ինչ հիմք ունի յենթադրելու, վոր փաստաթուղթը հակառակ կողմի կամ այն անձերի ձեռքին ե. ե այն հանգամանքները, վոր կարող են այդ փաստաթղթովն հաստատվել:

Հոդ. 142.—Պետական հիմնարկություններից ու մասնավոր անձերից դատարանի պահանջած փաստաթղթերը հղվում են անմիջապես դատարանին: Դատարանը կողմերին կարող ե վկայական տալ պետական հիմնարկություններից ու մասնավոր անձերից փաստաթղթեր, պատճեններ ե ամեն տեսակ տեղեկություններ ստանալու համար՝ դատարանին ներկայացնելու նպատակով:

Հոդ. 143.—Նախորդ հոդվածում, հիշատակված հիմնարկություններն ու անձինք, յեթե չեն կարող դատարանի սահմանած ժամանակին պահանջված փաստաթուղթը ներկայացնել, պարտավոր են այդ մասին տեղեկություն տալ դատարանին՝ մասնաշնչով պատճառը: Պատճառը հարգելի չլինելու, այլ ե տեղեկություն չտալու դեպքում դատարանը կարող ե տուգանել սույն Որենսգրքի 52 հոդ. համաձայն:

Հոդ. 144.—Ցեթե դատարանին փաստաթղթեր ներկայացնելը դժվար լինի, որինակի համար՝ նրանց բազմաթիվ լինելու կամ դատարանի համար նրանց միայն մի մասի նշանակութուն ունենալու պատճառով, դատարանը կարող ե պահանջել պատշաճ կարգով

վավերացրած քաղվածքներ կամ փաստաթղթերի քննությունը կատարել տեղնուտեղը:

Հոդ. 145.—Յեթե փաստաթղթերը ներկայացրած են վոչ դատաքննության լեզվովը, պետք է ներկայացվի նաև նրանց պատշաճ թարգմանությունը:

Հոդ. 146.—Գրավոր ապացույցների դեմ կարելի է առարկել, բացի որենքով հատկապես մատնանշված դեպքերից:

Հոդ. 147.—Փաստաթղթերն ընդունվում են իբրև ապացույց նաև այն դեպքում, յերբ նրանք կազմված են դրոշմատուրքի կանոնները զանց առնելով, բայց դատարանն այդպիսի փաստաթուղթ ստանալիս անհապաղ վորոշումն է անում դրոշմատուրքի կանոնադրությունը խախտողներից բոլոր տուրքերն ու տուգանքները գանձելու մասին. Այս վորոշման դեմ կարելի է բողոք տալ մասնավոր կարգով (հոդ. 149):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Առանց դրոշմատուրքը վճարելու ներկայացրած փաստաթուղթը հետ չի տրվում առանց դրոշմատուրքը վճարելու:

Հոդ. 148.—Յեթե հակառակ կողմը հայտնում է, թե գործի համար ներկայացրած փաստաթուղթը կեղծ է, փաստաթուղթը ներկայացնող կողմը կարող է հրաժարվել այն վորպես գործի համար ապացույց գործադրելուց և խնդրել դատարանից շարունակել գործի քննությունը այլ ապացույցների հիման վրա:

Հոդ. Յեթե փաստաթուղթը, վորի մասին կասկած է հայտնված (հոդ. 148), ներկայացնող կողմի պահանջմամբ թողնվում է գործի մեջ վորպես ապացույց, փաստաթղթի կեղծ լինելու մասին հայտնող կողմը դատարանի սահմանած ժամանակի ընթացքում պարտավոր է փաստաթղթի կեղծ լինելու ապացույցները ներկայացնել:

Հոդ. 150.—Փաստաթուղթը կեղծ հայտարարելու դեպքում քաղաքացիական գործը քննող դատարանը փաստաթղթի խախտման լինելն ստուգում է հետևյալ յեղանակներից մեկնումեկովը. ա) փաստաթուղթը գննելով և այլ փաստաթղթերի հետ համեմատելով, բ) հորցաքննելով այն վկաներին, վոր մատնանշված են փաստաթղթի մեջ կամ վորոնց կողմերն են հիշատակում, այլ և դատարանի նախաձեռնությամբ կանչվածներին, գ) քաղդատելով կասկածելի հայտարարված փաստաթղթի վրա յեղած ձեռքն ու ստո-

բազրութիւնը նույն անձի այլ անվիճելի փաստաթղթերի վրայեղած ստորագրութեան հետ, դ) փորձաքննութեան յենթարկելով:

Հոգ. 151. — Յեթե դատարանը համոզվում է վոր փաստաթուղթը կեղծ է, հանում է այն ապացույցների շարքից և գործ է հարուցանում քրեական կարգով:

Գ Լ ՈՒՄ XVI

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոգ. 152. — Գործի դատաքննութեան ժամանակ մասնագիտական տեղեկութիւններ պահանջող խնդիրներ ծագելու դեպքում նրանց պարզաբանութեան համար դատարանը կարող է նշանակել փորձագետներ:

Հոգ. 153. — Կողմերը կարող են մերժել փորձաքննութեան համար հրավիրվող անձանց նույն հիմունքներով, ինչպես և վկաներին:

Հոգ. 154. — Փորձագետներ նշանակելու վորոշման մեջ պետք է ցույց տրվի, թե ինչ հանգամանքների համար է պահանջվում նրանց յեզրակացութիւնը:

Հոգ. 155. — Փորձագետներն իրենց յեզրակացութիւնները տալիս են գրավոր կամ բերանացի, դատարանի հայեցողութեամբ: Բերանացի յեզրակացութիւնները մոծվում են արձանագրութեան մեջ և ստորագրվում փորձագետի կողմից: Գրավոր յեզրակացութիւն տալու դեպքում փորձագետներին դատարանը կարող է պարտաւորեցնել բերանացի պարզաբանել իրենց յեզրակացութիւնը:

Հոգ. 156. — Փորձագետներն իրենց հետաքրքրող հանգամանքները պարզելու համար կարող են հարցեր տալ վկաններին և մասնակցել տեղնուտեղը կատարվող զննութեան և ապացույցների ստուգման:

Հոգ. 157. — Փորձագետների յեզրակացութեան մեջ բոլոր հետեւիւթիւնները պետք է հիմնավորված լինին:

Հոգ. 158. — Փորձագետների հետազոտութիւնը լրացնելու և յեզրակացութիւնը պարզաբանելու անհրաժեշտութեան, այլ և մի քանի փորձագետների յեզրակացութեան հակասական լինելու դեպքում դատարանը կարող է նրանցից լրացուցիչ բացատրութիւն պահանջել կամ ուրիշ փորձագետներ նշանակել:

Հոգ. 159.—Փորձաքննութիւնը կատարվում է դատարանում կամ դատարանից դուրս, յեթե այդ պահանջում է հետազոտութեան բնույթը կամ յեթե դժվար է հետազոտելի առարկան դատարան բերել:

Հոգ. 160.—Տեղնուտեղը քննութիւն կատարում է կամ դատարանը ամբողջ կազմով կամ դատական նիստի նախագահողը:

Հոգ. 161.—Տեղնուտեղը կատարվող գննութեան ներկա լինելու համար կոչնագիր ստացած կողմերի չգալը չի կասեցնում գննութիւն կատարելը:

Հոգ. 162.—Տեղնուտեղը կատարվող գննութեան և այդ գննութեան ժամանակ տեղի ունեցած գործողութիւնների մասին արձանագրութիւն է կազմվում, վոր ստորագրում են բոլոր գննութեան մասնակցողները: Արձանագրութեանը կցվում են ցուցակի հետ միասին՝ գննութեան ժամանակ կազմված կամ բաղդատված բոլոր հատակագծերը, գծագրերը, նկարները և այլն:

Գ Լ ՈՒՄ XVII

ՄԻ ՔԱՆԻ ՊԱՀԱՆՁԱՏԵՐԵՐԻ ԿԱՄ ԴԱՏԱԿԻՐՆԵՐԻ ՅԵՎ ՅԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՅ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոգ. 163.—Դատապահանջ մարդ են ներկայացնել մի քանի պահանջատեր միասին կամ կարելի է ներկայացնել մի քանի դատակիրները գեմ:

Հոգ. 164.—Պահանջատերերից կամ դատակիրներից յուրաքանչյուրը դատավարութեան մեջ հակառակ կողմի նկատմամբ հանդես է գալիս ինքնուրունաբար, և դատակիրներից մեկի գործողութիւնները դատի ժամանակ մնացյալներին վոչ հոգուտ և վոչ ի վնաս չեն ծառայում, բացի այն դատապահանջներից, վոր բղխում են համապատասխան հանձնառութիւններից:

Հոգ. 165.—Դատակիրները գործի վարումը կարող են հանձնել իրենցից մեկին, յեթե նույն իսկ նա առհասարակ ուրիշ գործ վարելու իրավունք չունենա:

Հոգ. 166.—Յեթե գործի դատավարութեան ընթացքում յերեվան դա, վոր դատապահանջ ներկայացնողն այն անձը չէ, վոր տվյալ դատապահանջն անելու իրավունք ունի, կամ պահանջն արված է վոչ այն անձից, վոր պատասխան է տալիս այդ պահանջի:

համար, այդ դեպքում դատարանը՝ առանց գործը կարճելու, կարող ե թույլ տալ, վոր գործից դուրս յեկող պահանջատիրոջը կամ դատակրին փոխարինեն պատշաճ պահանջատերը կամ դատակիրը:

Հոդ. 167.—Պահանջատերն ու դատակիրը կարող են իրենց կողմը քաշել յերրորդ անձանց, յեթե գործի լուծումը կարող ե վերջինների համար իրավունքներ ու պարտավորություններ ստեղծել կողմերից մեկի նկատմամբ:

Հոդ. 168.—Յերրորդ անձերը կարող են գործին միջամտել իբրեւ պահանջատիրոջ կամ դատակրի կողմնակից, յեթե գործի վերաբերյալ վճիռը նրանց համար կարող ե իրավունքներ ու պարտավորություններ ստեղծել կողմերից մեկի նկատմամբ:

Հոդ. 169.—Վիճելի առարկայի վրա ինքնուրույն իրավունք ունեցող յերրորդ անձինք գործին միջամտում են դատապահանջ ներկայացնելով դատվող կողմերից մեկին կամ յերկուսին ել՝ ընդհանուր հիմունքներով:

Հոդ. 170.—Յերրորդ անձանց գործի մեջ քաշելու մասին կողմերի տված ինդիքների և յերրորդ անձանց դիմումների մեջ իբրեւ պահանջատիրոջ կամ դատակրի կողմնակից գործին միջամտելու մասին՝ ճշտությամբ պիտի մասնանշված լինին այն հիմունքները, վորոնցով յերրորդ անձինք պիտի կանչվեն կամ իրավունք ստանան գործին մասնակցելու:

Հոդ. 171.—Յերրորդ անձանց ինքնուրույն դատապահանջ ներկայացնելը կողմերին, այլ և յերրորդ անձանց կանչելն ու դատավարության շրջանում գտնվող գործին միջամտելը թույլ ե տրվում դատավարության ամբողջ ընթացքում մինչև գործի վերաբերյալ վճռահատությունը:

Հոդ. 172.—Յեթե գործի դատավարության ընթացքում յերեւան գա, վոր նրա յելքովը շահագրգռված ե մի պետական հիմնարկություն կամ ձեռնարկություն, վոր գործին չի մասնակցում, դատարանը պարտավոր ե դատավարության մեջ գտնվող գործի մասին տեղեկացնել պետական հիմնարկությանը կամ ձեռնարկությանը, այլ և դատախազությանը:

Հոդ. 173.—Յեթե դատարանում քննվում ե մի քանի գործ, վորոնց միեկնույն անձինք են մասնակցում իբրեւ պահանջատիրոջ կամ դատակրի կողմնակիցներ, դատարանը կարող ե այդ գործերի դատաքննությունները միացնել և վորոշել այդ գործերը քննել միասին:

Գ Լ ՈՒՐ XVIII

Վ Ճ Ռ Ա Հ Ա Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հոգ. 174.—Վճիռը կայացվում է ձայների առավելությամբ։ Դատավորներից վոչ վոք ձեռնպահ մնալու իրավունք չունի։ Յուրաքանչյուր դատավոր կարող է գործին կցել յուր առանձին կարծիքը։

Հոգ. 175.—Կայացած վճիռը գրվում է և ստորագրվում բոլոր դատավորների կողմից։

Հոգ. 176.—Կայացած վճիռը պիտի պարունակե. ա) վճռահատության ժամանակը. բ) դատարանի կազմը և դատավորների անունը. գ) վեճի առարկան. դ) վճռի հիմունքը և այն որոնքները, վորոնցով դատարանը ղեկավարվել է. ե) գործի վերաբերյալ վճռի բովանդակությունը և նրա կատարման կարգը. զ) վճռի դեմ գանգատ տալու կարգը. ը) դատական ծախքերի բաշխումը։

Հոգ. 177.—Բացառիկ դեպքերում, յեթե գործի բարդության պատճառով վճիռ կազմելը յերկարատե ժամանակ կամ նախապատրաստություն է պահանջում, դատարանը վճռի հայտարարությունը կարող է հետաձգել վոչ ուշ քան յերեք որ ժամանակով, հատուկ վորոշումն անելով այդ մասին, վոր հայտարարվում է դռնբաց։

Հոգ. 178.—Դատարանի կայացրած վճիռը դռնբաց է հայտարարվում։ Յեթե դատարանի անդամներից վոր և է մեկը չնախտեսված հանգամանքների շնորհիվ չի կարող վճիռն ստորագրել, այդ մասին հիշատակություն է արվում նախագահի ստորագրությամբ։

Հոգ. 179.—Յեթե դատական պահանջների չափը հիմնված չե կողմերի վաղորոք կայացած համաձայնության վրա կամ վորոշված չե որինական կարգով (մուրհակ, պայմանագիր, սակացույցներ և այլն), այդպիսի դեպքում դատարանը գործի վերաբերյալ վորոշումն անելիս կարող է դուրս գալ պահանջատիրոջ ներկայացրած պահանջների սահմաններից, ինկատի ունենալով դատի ժամանակ պարզված հանգամանքները։

Հոգ. 180.—Յեթե դատարանը վճիռ է կայացնում, վոր գույքը հանձնվի ինչպես վոր կա կամ վորոշ գործողություններ կատարվին, այդ դեպքում դատարանը նույն իսկ վճռի մեջ մատ-

նանշուած և վճռի կատարման ժամանակը:

Հոդ. 181. — Վճռահատությունից հետո կողմերից յուրաքանչյուրը յոթն որվա ընթացքում կարող է խնդրել, վոր դատարանը լրացուցիչ վճիռ կայացնի. ա) յեթե վոր և է դատական պահանջի վերաբերմամբ, վորի համար կողմերը ապացույցներ են ներկայացրած յեղել և բացատրություն տվել, դատարանը վճիռ չե կայացրել. բ) յեթե դատարանը իրավունքի խնդիրը լուծել է, բայց չե վորոշել այն վճուած պահանջի կամ առարկայի ճիշտ չափը, վոր պիտի հանձնի կամ գանձվի:

Հոդ. 182. — Դատարանը վճիռ կայացնելիս և վճռի կատարման կարգը վորոշելիս կարող է հետաձգել նրա կատարումը կամ մի քանի նվազի բաժանել, աչքի առաջ ունենալով կողմերի նյութական վիճակը կամ գործի այլ հանգամանքները:

Հոդ. 183. — Յեթե վճիռը կայացել է հոգուտ կամ ընդդեմ մի քանի դատակիցների, դատարանը մատնանիշ է անում, թե ինչ չափով է վերաբերում վճիռը նրանցից յուրաքանչյուրին և թե համապարտ է արդյոք պատասխանատվությունը կամ համիրավ է պահանջը:

Հոդ. 184. — Վճիռները կայացնում են միայն այն նիստին մասնակցող դատավորները, վորում ավարտվել է գործի դատաքննությունը:

Հոդ. 185. — Վճիռների պարզաբանությունն ու մեկնությունը վերաբերում է գործը վճռող դատարանին. վճիռների մեկնության մասին խնդիր տալը վոչ մի պայմանաժամով չի սահմանափակված, յեթե վճիռը դեռ ի կատար չի ածված կամ ուշժը չի կորցրել՝ յեռամյա վաղեմությունը լրանալու հետևանքով:

ԳԼ ՈՒ Խ XIX

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ ՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդ. 186. — Դատարանի վճիռը մտնում է ուշի մեջ և գործադրելի յե վճռահատության պահից, բացի այն գործերից, վորոնցում պատասխանող են հանգիստանում վոր և է պետական հիմնարկություն և պետական ձեռնարկություն:

Հոդ. 187. — Վճիռ կայացնող դատարանը, յեթե վճռի անհապաղ կատարումը կարող է այնպես փոխել վիճելի իրավունքը, վոր

վճիռը ջնջվելու դեպքում կարելի չի լինի այդ իրավունքը նախկին ձևով վերականգնել, կարող է վորոշումն անել, դատակրի խնդիրքով, կատարումը կասեցնելու մասին՝ մինչև վճռաբեկ գանգատի լուծումը, միաժամանակ միջոցներ ձեռք առնելով պահանջքի ապահովման համար: Դատարանի վճիռը այն գործերի վերաբերմամբ, վորոշում պատասխանող են հանդիսանում վոր և է պետական հիմնարկութուն կամ պետական ձեռնարկութուն, ույժի մեջ է մտնում վճռաբեկ գանգատ տալու ժամանակը լրանալուց հետո, իսկ գանգատ տրվելու դեպքում՝ վճռաբեկ ատյանի վերջնական վճռից հետո:

Հոդ. 188.— Դատարանի վճիռը կամ կողմի խնդիրքով դատապահանջն ապահովելու մասին արած վորոշումն ի կատար ածելու համար դատարանը կատարողական թերթ է տալիս:

Հոդ. 189.— Յեթե կայացած վճռի համաձայն մի քանի տեղում գտնվող գույք պիտի հանձնվի կամ յեթե վճիռը գայացել է հոգուտ մի քանի պահանջատերերի կամ ընդդեմ մի քանի դատակիրներին, այդպիսի դեպքերում դատարանը պահանջատերերի խնդիրքով կարող է մի քանի կատարողական թերթ տալ՝ ճշտվ վորոշելով վճռի այն մասը, վոր տվյալ թերթով պետք է կատարվի:

Հոդ. 190.— Վճիռը կայացնող դատարանը կորցրած կատարողական թերթի իսկականի փոխարեն կարող է տալ նրա կրկնակը. կրկնակ տալու վերաբերյալ խնդիրքը քննվում է կողմերին կանչելով:

Մ Ա Ս Ն Յ Ե Ր Ր Ո Վ ՀԱՏՈՒԿ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ Լ ՈՒՒ XX.

Ը Ն Պ Հ Ա Ն ՈՒՐ Ս Գ Ս Բ ՈՒ Ն Ք Ն Ե Ր

Հոդ. 191.— Հատուկ դատավարության յենթակա են այն գործերը, վոր վերաբերում են. ա) մեռածներից հետո մնացած գույքին, բ) միջնորդագրների և միջնորդ դատարանների վճիռներին, գ) հանձնառությանց առարկաները դատարանին հանձնելուն (ավանդ), դ) ակտերի վերաբերյալ դատական հրամաններ տալուն, յե) ամուսնալուծության, զ) կրոնական համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից ազատելուն, բ) նոտարների գործողու-

թյունների դեմ տրվող գանգաւաններին:

Հոդ. 192.—Հատուկ դատավարութեան յենթակա գործերը ժողովրդական դատավորը քննում եւ միանձնաբար դոճաբաց դատական նիստերում՝ ստուգելով ապացույցները եւ կարիք յեղած դեպքում դատարան կանչելով շահադրգոված անձանց, ի բաց առջալ մյուս Որենսգրքի XXIV, XXVI եւ XXVII գլուխներով նախատեսված գործերը:

Հոդ. 193.—Յեթե գործի քննութեան ժամանակ շահադրգոված անձը վեճ հարուցանե, դատավորը կարող եւ հատուկ դատավարութեանը կարճել, հնարավորութեան տալով կողմերին իրենց գործը վերջացնելու՝ դատապահանջի ընդհանուր կարգով:

Գ Լ ՈՒԽ XXI:

ԳԱՏԱՐԱՆԻ՝ ՄԵՌԱԾՆԵՐԻՑ ՀԵՏՈ ՄՆԱՅԱԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդ. 194.—Յեթե դատավորն անհրաժեշտ համարե մեռածից հետո մնացած գույքը պահպանող նշանակել, այդպիսի պահպանող նշանակում եւ առավելապես յեղած ժառանգներից:

Հոդ. 195.—Հարկ յեղած դեպքում ժողովրդական դատավորը կարգադրութեան եւ անում մեռածից հետո մնացած գույքից գումարներ տալու մասին հետեյալ ծախքերը հոգալու համար. ա) թաղման. բ) հանգուցյալի հաշվին ապրող անձանց ապրուստի. գ) մեռածի վճարելիք աշխատավարձը հատուցանելու. դ) գույքը պահպանելու եւ յե) կառավարելու:

Հոդ. 196.—Ժողովրդական դատավորը, Քաքաքացիական Որենսգրքի 430 եւ 433 հոդ. մատնանշված վեցամսյա ժամանակամիջոցը անցնելուց հետո, շահադրգոված անձանց խնդիրքով վորոշումն եւ անում, վորով վավերացնում եւ ժառանգական գույքի փոխանցումը պատշաճ անձանց կամ հիմնարկութեաններին: Վորոշման մեջ մատնանշվում եւ, թե ով եւ ժառանգ հանդիսանում, ինչ գույքի ինչ գումարի եւ ինչ բաժինների, եւ թե ինչ չափով նրանցից յուրաքանչյուրիցը ժառանգական տուրք պիտի գանձվի:

Հոդ. 197.—Այդ վորոշման պատճենը տրվում եւ զավառական ֆինանսական բաժնին եւ հաճնվում եւ շահադրգոված անձանց՝ նրանցից հասանելի տուրքը վճարած կամ հետաձգած լինելու մասին անդորրագիր ներկայացնելուց հետո միայն:

Հոդ. 198.—Ժառանգատվից պահանջ ունեցող անձինք իրավունք ունին դիմելու այն Ժողովրդական Դատարանին, վորի շրջանում ժառանգությունը բացվել է, և խնդրելու, վոր միջոցներ ձեռք տանվին իրենց պահանջների բավարարումն ապահովելու համար,

Գ Լ ՈՒՍ XXII

ՄԻՋՆՈՐԴԱԳՐՆԵՐԻ ՅԵՎ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդ. 199 Կողմերի համաձայնությունը քաղաքացիական իրավունքի վերաբերյալ իրենց վեճը միջնորդ դատարանի ձեռքով քննելու մասին (միջնորդագիր) ույժի մեջ է մտնում նրանից հետո միայն, յերբ համապատասխան ժողովրդական դատավորը մակագրություն է տնում միջնորդագրի նրա տոմարագրված լինելու մասին:

Հոդ. 200.—Միջնորդ դատարաններում քննվող գործերի համար դատական տուրքերը դանձում է ժողովրդական դատավորը կիսով չափ, միջնորդագրի վրա մակագրություն անելիս:

Հոդ. 201.—Միջնորդ դատարանի ամբողջ գործավարությունն՝ ավարտվելուց հետո ներկայացվում է պահելու համար այն Ժողովրդական Դատարանին, վորի շրջանում միջնորդ դատարանը տեղի է ունեցել: Յեթե պետք լինի վճիռն ի կատար ածել հարկուղրական կարգով, Ժողովրդական դատավորը կատարողական թերթ է տալիս սույն Որենսգրքի XIX գլխում սահմանված կանոններէ համաձայն,

Հոդ. 202.—Կատարողական թերթ տալիս Ժողովրդական դատավորն հավաստիանում է, վոր վճիռը կայացրած է միջնորդ դատարանների համար սահմանված կանոնների համեմատ և առհասարակ չի հակասում որենքին:

Հոդ. 203.—Յեթե Ժողովրդական դատավորը մերժե կատարողական թերթ տալ, այդ մասին կարելի է մասնավոր գանգատ տալ Գլխավոր Դատարանին (հոդ. 249):

Գ Լ ՈՒՐ XXIII.

ՀԱՆՁՆԱԹՈՒԹՅԱՆՅ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԴԱՏԱՐԱՆԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՎԱՆԳ)

Հոդ. 204.—Դատարանին իբրև ավանդ կարելի չէ տալ ղրամ, արժեթղթեր և թանկարժեք իրեր, բայց վոչ անմիջապես ժողովրդական դատարանին, այլ ֆինանսական բաժնին, վորից ստացած անդորրագիրը ներկայացվում է ժողովրդական Դատարանին:

Հոդ. 205.—Ֆինանսական բաժնի անդորրագիրը հանձնվում է կատարման տեղի ժողովրդական Դատարանին՝ բերանացի կամ զբաւոր հայտարարության հետ, վորի մեջ հիշատակված պիտի լինի. ա) հանձնողի անունն ու հասցեն. բ) այն անձի անունն ու վերջին հայտնի հասցեն, վորի համար ավանդը հանձնվում է. գ) ավանդի հիմքն ու հաշիվը. դ) հանձնառությունն անմիջապես կատարելու անկարելիության պատճառները: Միաժամանակ հատուցվում են այն տուրքերը, վոր անհրաժեշտ են պարտատիրոջը կանչելու համար:

Հոդ. 206.—Ժողովրդական դատավորը, առանց ավանդի հիմունքն ստուգելու, իրեն ներկայացրած զբաւոր հանձնառության վրա մակագրություն է անում տեղի ունեցած ավանդատվության մասին՝ մատնանշելով նրա ժամանակը և ապա՝ ղրված ավանդի մասին հայտնում է այն անձին, վորի համար ավանդը ղրված է, դատակիրներին կանչելու համար սահմանված կարգով:

Հոդ. 207.—Ժողովրդական դատավորը ավանդն ըստ պատկանելույն հանձնելու խնդիրը վճռում է այն անձի ներկայանալուց հետո, վորին վոր պիտի այն հանձնվի, և ավանդն ստանալու իրավունքը հաստատող փաստաթուղթ ներկայացնելուց հետո:

Հոդ. 208.—Ստացողի ինքնությունը ճշտելուց և պաշտօնական փաստաթղթերն ստուգելուց հետո ժողովրդական դատավորը վորոշումն է անում ավանդը հանձնելու մասին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ֆինանսական բաժնի ավանդը հանձնելիս ներկայացրած փաստաթղթի վրա այդ մասին մակագրություն է անում:

Հոդ. 209.—Ավանդ ստալու կանոնավորության դեմ առարկությունները կամ ավանդն ընդունելուց հրաժարվելը կարող են քննվել մի յն դատապահանջի ընդհանուր կարգով:

Գ Լ ՈՒՐ XXIV.

ԱՅՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդ. 210. — Դատական հրամանները կիրարկվում են դրամ գանձելու կամ թե գույք վերադարձնելու կամ փոխանցելու պահանջների համար, վորոնք հիմնված են. ա) բողոքարկված մուրհակների վրա. բ) այն ակտերի վրա, վորոնց կազմելու կամ վավերացնելու համար պարտադիր նոտարական կարգ ե սահմանված, յեթե միայն այդ կարգը պահպանված ե. գ) դատական կարգով կատարված ամեն տեսակ հաշտության գործարքների վրա. դ) զավակների ե ամուսնու ապրուստի վերաբերմամբ քաղաքացիական վիճակի ակտերի որեւորքով նախատեսված կարգով կնքված համաձայնությանց վրա. ե) աշխատավարձի հաշվեգրքույկների վրա:

Հոդ. 211. — Դատական հրամաններ չեն տրվում. 1) յեթե պահանջն արվում ե պետական հիմնարկությունից կամ ձեռնարկությունից. 2) յեթե պայմանաժամը լրանալու որից մի ամսից ավելի ե անցել. 3) յեթե խնդրատուի պահանջ ներկայացնելու իրավունքը հաստատելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ապացույցներ. 4) յեթե պարտապանի պատասխանատվությունը յերեւան չի գալիս ներկայացրած փաստաթղթերի բնագրից. 5) յեթե հանձնառության կատարումը, վորի վրա հիմնված ե պահանջը, նույնիսկ փաստաթղթի մեջ այնպիսի պայմաններով ե պայմանավորված, վորոնց տեղի ունենալը պետք ե նախորոք ապացուցված լինի:

Հոդ. 212. — Գանձման վերաբերյալ դիմումի հետ ներկայացվում են՝ ա) այն իսկական փաստաթղթերը, վորոնց հիման վրա ներկայացվում ե պահանջը, դիմողի ստորագրությամբ վավերացրած պատճենների հետ միասին. բ) սահմանված դատական տուրքերն ու ծախքերը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Դատական տուրքերը վճարվում են դատապահանջի ընդհանուր կարգի համար սահմանված տուրքերի մի քառորդ մասի չափով՝ դատական հրաման տալու վերաբերյալ խնդրի մեջ մատնանշված գումարից.

Հոդ. 213. — Դատական հրաման տալու խնդիրքները, վորքան ել վոր լինի գանձելի գումարը, ներկայացվում են պարտապանի բնակության կամ պահանջվող գույքի գտնված գեղի ժողովրդական դատավորին.

Հոդ. — 214. — Իսկական ակտը դատական հրամանի հետ միասին վերադարձվում է պահանջատիրոջը, իսկ նրա պատճենը թողնվում է ժողովրդական Դատարանի գործերում:

Հոդ. 215. — Դատական հրամանը պիտի պարունակե. 1) համարը, վորով խնդիրքը նշանակված է ժողովրդական դատարանի գործի մեջ. 2) հրաման կայացնելու տարին, ամիսն ու ամսաթիվը. 3) հրամանը կայացնող դատարանն ու նրա գտնված տեղը. 4) թե պահանջատիրոջ և թե դատակրի անունն ու բնակության տեղը. 5) փաստաթղթերի ճիշտ անունն ու վորոշումը (ներանց կազմելու տեղն ու ժամանակը, վավերացնող հիմնարկության անունը, վավերացման ամսաթիվն ու համարը). 6) ժամանակամիջոցները, վորոնց համար տեղի է ունենում վճարելիքների գանձումը (մաս առ մաս գանձելիս՝ վորոշյալ ժամանակամիջոցների համար). 7) գանձելի գումարը կամ առարկաները. 8) դատակրի վճարելիք դատական ծախքերը. 9) հասանելի տոկոսները և 10) ժողովրդական դատավորի ու քարտուղարի ստորագրությունը և դատարանի կրիքը:

Հոդ. 216. — Դատական հրաման տալը մերժելու դեպքում ժողովրդական դատավորը խնդրատուին վերադարձնում է բոլորներկայացրած փաստաթղթերը:

Հոդ. 217. — Դատական հրամանը կատարողական թերթի ույժ ունի:

Հոդ. 218. — Դատական կատարածուն կատարված գանձումների մասին մակագրություն է անում նույն ակտի վրա, և, յեթե կատարված գանձումը լրիվ չի շուցանում է փաստաթղթի մեջ յեղած հանձնառությունը, իսկական փաստաթուղթը տրվում է պարտապանին:

Հոդ. 219. — Դատական հրամանի դեմ կարելի է գանգատ տալ Դիխավոր Դատարանին վճարեկության ընդհանուր կարգով: Գանգատ տալու պայմանաժամն սկսվում է պարտապանի՝ կատարման մասին ծանուցագիր ստանալու պահից, իսկ պահանջատիրոջ համար՝ դատական հրաման տալու մերժման պահից:

Գ Լ Ո Ւ Խ XXV.

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդ. 220. — Ամուսնալուծության մասին դիմումներ արվում են դիմում անողի բնակության տեղի ժողովրդական Դատարանին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ամուսինների փոխադարձ համաձայնությամբ դիմում կարելի է անել քաղաքացիական վիճակի ակտերի արձանագրությանց այն վայրի բաժնին, վորտեղ ամուսնությունը կատարված է:

Հոդ. 221. — Կողմերին կանչելը տեղի է ունենում պահանջատիրոջն ու դատակրին կանչելու համար սահմանված ընդհանուր կարգով, իսկ յեթե դիմողին մյուս կողմի բնակության տեղը հայտնի չէ, դատարանումն հայտարարություն է կախ տրվում, թե գործը լավելու է մի ամսից հետո: Կողմերի դատարանին չներկայացանալը չի կասեցնում գործի ունկնդրությունը:

Հոդ. 222. — Դիմող այլը կամ կինը կամ դատարանին ամուսնության փաստաթուղթ է ներկայացնում կամ ստորագրություն է տալիս, վոր ամուսնացած է պատասխանողի հետ:

Հոդ. 223. — Ամուսինների համաձայնությունն այն մասին, թե նրանցից ում մոտ է զավակներից վորն է մնում դատարանալուծյան համար և նրանցից ով և ինչ չափով պիտի հոգա յերեխաների ապրուստի և դատարանալուծյան ծախքերը, այլև կարողալ աշխատունակ ամուսնու սննդադրամի չափի մասին՝ դատավորը մոծում է դատական նիստի արձանագրության մեջ: Այդ համաձայնությունը պիտի ի կատար ածվի վորպես դատական վճիռ, վոր սակայն չի զրկում ամուսիններից ու յերեխաներից յուրաքանչյուրին հետագայում դատապահանջի ընդհանուր կարգով իրենց հասանելի սննդադրամը պահանջելու իրավունքից, յեթե վերջին դումարը համաձայնությամբ նախատեսված չափիցն ավելի է:

Հոդ. 224. — Համաձայնություն չեղած դեպքում դատավորը ամուսնալուծության մասին վորոշումն անելու հետ միաժամանակ վորոշումն է կայացնում, գործի հանգամանքների համեմատ և յերեխաների շահերն աչքի առաջ ունենալով, թե ամուսիններից վորը և ինչ չափով մինչև վեճի դատապահանջի ընդհանուր կարգով լուծումը, պարտավոր է ժամանակավորապես հոգալ յերեխաների ապրուստի ծախքը և թե ում մոտ յերեխաները ժամանակավորապես պիտի մնան դատարանալուծյան համար, և վորոշում է կարող-

յալ աշխատունակ ամուսնուն հասանելի սննդադրամի չափը:

Հոգ. 225. — Ամուսնալուծության վերաբերյալ վորոշման պատճենը դատավորը հաղորդում է քաղաքացիական վիճակի ակտերի արձանագրությանց այն տեղի բաժնին, վորտեղ ամուսնությունը կատարված է:

Գ Լ ՈՒՄ XXVI.

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՁՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոգ. 226. — Այն անձինք, վորոնք ցանկանում են Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդի 1922 թ. նոյեմբերի 25-ի դեկրետի հիման վրա միջնորդութուն հարուցանել իրենց զինվորական ծառայությունից կրոնական համոզմունքների պատճառով ազատելու մասին, դիմում են Գլխավոր Դատարանին. այսպիսի գործերը լսվում են խնդրատունին կանչելով և անպատճառ դատախազության ներկայացուցչի մասնակցությամբ:

Հոգ. 227. — Այս կարգի գործերում փոխանորդների մասնակցությունը թույլ չի տրվում:

Հոգ. 228. — Դատարանը վճիռ կայացնելիս լսում է փարձաքննության յեզրակացությունն այն մասին, թե տվյալ անձն հիմալի իր ասած կրոնական վարդապետության հետևող է և իրոք գործադրում է այն և թե այդ վարդապետության հետևող լինելը բացասում է զինվորական ծառայությունն՝ ինչ ձևով ել վոր լինի:

Հոգ. 229. — Այս կարգի խնդիրքները պիտի տրվեն վոչ ուշ քան գորակուշի ներկայանալու պայմանաժամից մի ամիս առաջ:

Հոգ. 230. — Զինվորական ծառայությունից ազատելու մասին դատարանի կայացրած վորոշման մեջ պետք է մատնանշվի, թե՞ ա) ինչ գործ է իսկապես նշանակվում, բ) ուր և յերբ պիտի ներկայանա ազատվածը նշանակված գործը կատարելու համար կամ գ) պիտի առաջ բերվեն ծառայությունից իսպառ ազատելու շարժառիթները՝ Անդրկովկասի Ս. Խ. Հ. Միության Խորհրդի 1922 թ. նոյեմբերի 25-ի դեկրետի համաձայն: Վորոշման պատճենն հղվում է այն հիմնարկությանը, ուր ուղարկվում է ազատվածը, այլ և տեղական ռազմական կոմիտարիատին:

Գ Լ ՈՒԽ XXVII.

ՆՈՏԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՏՐՎՈՂ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ

Հոդ. 231.—Նոտարների կատարած վոր և ե գործողության, գործողություններ կատարելուց հրաժարվելու, ինչպես նաև գործը ձգձգելու դեմ գանգատներ տրվում են Գլխավոր Դատարանին և քննվում են նրա քաղաքացիական բաժնում:

Հոդ. 232.— Գանգատ տալու համար յերկու շաբաթ ժամանակ ե սահմանվում՝ սկսած այն որվանից, յերբ գանգատվորն իմացել ե նոտարի կարգադրության մասին: Գործը ձգձգելու դեմ գանգատ տալու ժամանակը սահմանափակված չե:

Հոդ. 233.— Գանգատները տրվում են այն նոտարին, վորի գործողությունների դեմ գանգատ ե տրվում, և ներկայացվում են Գլխավոր Դատարանին՝ ստացվելուց հետո յերեք որվա ընթացքում, գործի եռության վերաբերյալ բացատրության և իսկական գործի կամ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենների հետ միասին: Գանգատները կարելի յե տալ նաև անմիջապես Գլխավոր Դատարանին:

Հոդ. 234.— Նոտարները պայմանաժամն անցնելուց հետո տրված գանգատները վերադարձնում են՝ այդ մասին տեղեկություն տալով Գլխավոր Դատարանին:

Ս Ա Ս Ն Չ ՈՐՐՈՐԴ

ՎՃԻՌՆԵՐԻ ԴԵՄ ԳԱՆԳԱՏ ՏԱԼՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Գ Լ ՈՒԽ XXVIII.

ՎՃԻՌՆԵՐԻ ԴԵՄ ԳԱՆԳԱՏ ՏԱԼԸ

Հոդ. 235.— Դատարանի վճռի դեմ գործին մասնակցողները կարող են վճռաբեկ գանգատ տալ Գլխավոր Դատարանին կամ Գերագույն Դատարանին՝ ըստ պատշաճի: Գանգատը ներկայացվում ե վճիռ կայացնող դատարանին, կցելով պատճենները հակառակ կողմից մասնակցողների թվով:

Հոդ. 236.— Գանգատը պիտի պարունակե. ա) մատնանշումն այն վճռի, վոր գանգատվորն անկանոն ե համարում (հոդ. 176). բ) մատնանշումն, թե վորն ե վճռի անկանոնությունը. գ) գան-

գատաւորի խնդիրքը վճիռն ամբողջովին կամ մասնակի ջնջելու մասին:

Հոդ. 237. — Վճիռը ջնջելու հիմք կարող է լինել. ա) գործող որենքների և մասնավորապես սույն Որենսգրքի 4 հոդվածի խախտումը կամ սխալ կիրարկութիւնը, կամ բ) վճռի ակներև հակասութիւնը գործը վճռող դատարանի ճշտած՝ գործի փաստական հանգամանքներին:

Հոդ. 238. — Գանգատ տալու պայմանաժամ է սահմանվում ժողովրդական Դատարանների վճիռների դեմ՝ յերկու շաբաթ և Գլխավոր Դատարանի վճռի դեմ՝ մի ամիս, վճիռը հայտարարելու օրից:

Հոդ. 239. — Դատարանը տրված գանգատը և գործի վերաբերյալ ամբողջ գրազրութիւնը հղում է բարձրագույն ատյանին՝ վոչ ուշ քան գանգատն ստանալուց հետո յերեք օրվա ընթացքում և միաժամանակ սրատճենն ուղարկում է հակառակ կողմից մասնակցողներին:

Հոդ. 240. — Մյուս կողմը գանգատի պատճենն ստանալուց հետո մի շաբաթվա ընթացքում վճիռը կայացնող դատարանին կարող է վճռաբեկ գանգատի առթիւ բացատրութիւն ներկայացնել՝ կցելով պատճենը: Այդ բացատրութիւնը հղվում է բարձրագույն ատյանին, իսկ պատճենը՝ գանգատ տվողին:

Հոդ. 241. — Գործին մասնակցողները՝ վոչ ուշ քան բարձրագույն ատյանի գործի վերաբերյալ առաջին նիստը կարող են միանալ այն կողմի տված գանգատին, վոր կողմից վոր իրենք մասնակցում են:

Հոդ. 242. — Վճռաբեկ գանգատները լսելիս կանչվում են կողմերը, վորոնց Գլխավոր Դատարանը կանչում է կոչնագրերով սույն Որենսգրքի 66-73 հոդվածների կարգով, իսկ Գերագույն Դատարանը ունկնդրութեան համար նշանակված գործերի ցանկը հրապարակում է պաշտոնական թերթում՝ վոչ ուշ քան դատական նիստից յերկու շաբաթ առաջ և հայտարարութիւն է կախ տալիս այդ մասին հենց դատարանի շինութեան մեջ:

Հոդ. 243. — Գործի ունկնդրութեան օրվա մասին կոչնագիր ստացած կողմերի դատարանին չհերկայանալը արգելք չի հանդիսանում գործի դատաքննութեան համար:

Հոդ. 244. — Գործը վճռաբեկութեան կարգով քննելիս դատախազը յուր յեզրակացութիւնը կարող է տալ գործի մասին թե

զըաւոր և թե բերանացի՝ դատական նիստում:

Հոդ. 245.—Բարձրագույն անոյանը վճռաբեկ դանգատը քննելիս կաշկանդված չե գանգատի մեջ մատնանշված առիթներով:

Հոդ. 246.—Բարձրագույն ատյանը, յեթե գանգատն անհիմն ե համարում, թողնում ե առանց հետևանքի: Գանգատը հարդելի ճանաչելու դեպքում բարձրագույն ատյանը ջնջում ե ամբողջ վճիռը կամ նրա մի մասը և կամ գործը կարճում ե, յեթե վեճը լուծելի չե դատական կարգով, այլ և դատաստանանքի իրավունքի բացակայութեան դեպքում, կամ վերադարձնում ե գործը վերստին քննելու համար ամբողջը կամ միայն ջնջված մասը՝ դատարանի այլ կազմի ձեռքով:

Հոդ. 247.—Յեթե Գերագույն Դատարանի վճռաբեկ կոլեգիան գործը քննելիս որևէրի իմաստի դեկլավար պարզաբանութունն անհրաժեշտ ե համարում գործի դատաքննութունն հետաձգում ե մինչև որևէրի իմաստի պարզաբանվելը Գերագույն Դատարանի ընդհանուր ժողովում:

Հոդ. 248.—Վորոշման մեջ պետք ե մատնանշվեն այն նկատումները, վորոնցով վճիռը ջնջված ե կամ գանգատն առանց հետևանքի թողնված: Այդ ցուցմունքները գործը վերաքննող դատարանի համար պարտադիր են:

Հոդ. 249.—Վճռաբեկ գանգատիցն անշատ կարող են տրվել մասնավոր գանգատներ՝ սույն Որենսգրքով հատկապես նախատեսված դեպքերում, և նրանց նկատմամբ կիրարկվում են սույն գլխի կանոնները: Այդ գանգատները տրվում են գանգատարկելի վորոշումը կայանալուց հետո յեթն որվա ընթացքում:

Գ Լ Ո Ի Խ XXIX.

ԴԱՏԱԿԱՆ ՎՃԻՐՆԵՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդ. 250.—Յեթե դատական վճիռների դեմ տված վճռաբեկ գանգատն առանց հետևանքի յե թողնված կամ վճռաբեկ գանգատ տալու պայմանաժամը լրացել ե, այդպիսի վճիռների վերաքննութեան վերաբերյալ խնդրի լուծումը վերաբերում ե բացառապես Գերագույն Դատարանին:

Հոդ. 251.—Վճիռը կարող ե վերաքննվել միայն հետևյալ դեպքերում. ա) յերբ յերևան են գալիս նոր հանգամանքներ, վոր գոր-

ծի համար ետևան նշանակութիւնն ունին, բայց հայտնի չեն յեղել այս կամ այն կողմին. բ) յերբ դատավճռով՝ այն գործի վերաբերմամբ, վորի մասին վճիռը կայացել է, յերևան են հանված վկաների սուտ ցուցմունքներ, կողմերի, նրանց փոխանորդների կամ փորձագետների կամ թե դատարանի գործին մասնակցած անդամների հանցավոր արարքներ և գ) յերբ վճիռը հիմնված է այնպիսի փաստաթղթերի վրա, վոր հետագայում քրեական գործի վերաբերյալ դատավճռով կեղծ են ճանաչված կամ յերբ ջնջված է դատարանի տվյալ վճռի հիմքը կազմող վորոշումը:

Հոդ. 252. — Դատական վճիռների վերաքննության հարց կարելի չէ հարուցանել Գերագույն Դատարանի Քաղաքացիական Բաժնի առաջ թե գործին մասնակցող վոր և է կողմի խնդիրքով և թե Հանրապետության Դատախազի կամ համապատասխան գավառական դատախազի նախաձեռնութեամբ:

Հոդ. 253. — Կողմը դատական վճիռների վերաքննության մասին խնդիրք կարող է տալ վոչ ուշ քան մի ամսվա ընթացքում՝ այն որից, յերբ վճռի վերաքննության վերաբերյալ խնդրքի հիմք կազմող հանգամանքները յերևան են հանված:

Հոդ. 254. — Հանրապետության դատախազը և գավառական դատախազներն իրազուցում են ինչ հանրապետության դատախազի ձեռքով բողոքելու Գերագույն Դատարանին ավարտված քաղաքացիական գործերի վերաբերյալ վճիռների գեմ, յեթե այդ պահանջում է Բանվորա-Գյուղացիական Պետության և աշխատավոր մասնակցների շահերի պաշտպանութիւնը:

Դատախազի բողոքը վոչ մի պայմանաժամով սահմանափակված չէ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Հանրապետության դատախազին և գավառական դատախազներին է պատկանում այնպիսի գործ պահանջելու իրավունքը, վորի վերաբերյալ վճիռն որինական ուժի մեջ է մտել:

Մ Ա Ս Ն Հ Ի Ն Գ Ե Ր ՈՐ Դ

ԴԱՏԱԿԱՆ ՎՃԻՐՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Գ Լ ՈՒՒ XXX.

Ը Ն Գ Հ Ա Ն ՈՒՐ Ս Կ Զ Բ ՈՒ Ն Ք Ե Ր

Հոդ. 255. — Հաջորդ հոգվածներով վորոշված կարգով կատար-

ման յենթակա յեն. ա) դատարանների՝ քաղաքացիական գործերի վերաբերյալ վճիռները. բ) քաղաքացիական գործերի վերաբերյալ դատական հրամանները. գ) դատարանների վորոշումները հատուկ դատավարությանց գործերի վերաբերմամբ և դատապահանջների ապահովման մասին. դ) դատարանների քաղաքացիական գործերի վերաբերյալ վորոշումները տուգանելու մասին. ե) դատարանների՝ Քրեական Դատավարության Որենսգրքի 121 և 459 հոդվածների հիման վրա արած վորոշումները. զ) Իրավարար և Հողային Հանձնաժողովների վճիռները՝ նրանց կանոնադրություններով նախատեսված կարգով, և Միջնորդ Դատարանների վճիռները:

ՄԱՆՍԹՈՒԹՅՈՒՆ.—Ոտարերկրյա դատարանների վճիռների կատարման կարգը վորոշվում է պատշաճ պետությունների հետ կնքված հատուկ համաձայնություններով:

Հոդ. 256.—Դատական վճիռն ի կատար ածող անձը կատարողական գործողությունների ե ձեռնարկում պահանջատիրոջ բերանացի կամ գրավոր դիմումներով՝ ըստ պատշաճի տված կատարողական թերթերի հիման վրա:

Հոդ. 257.—Դատական կատարածուն վճիռն ի կատար ածելու ձեռնարկելիս կատարման մասին ծանուցագիր ե ուղարկում պարտապանին՝ ծանուցագրներ ուղարկելու ընդհանուր կանոնների համաձայն:

Հոդ. 258.—Յեթե պաշտպանը անձամբ կամ փոխանորդի միջոցով մասնակցել ե գործին, կատարման վերաբերյալ ծանուցագիրը վճռի որից մի ամսվա ընթացքում կարելի ե ուղարկել պարտապանի դատարանի գործումն յեղած հասցեով, և ծանուցագիրը հանձնված ե համարվում, նույն իսկ յեթե պարտապանն այնտեղ չլինի:

Հոդ. 259.—Յեթե պարտապանի բնակության կամ գրադմունքի տեղը հայտնի չե, և ծանուցագիրը 257 և 258 հոդվածների կարգով չի կարելի հանձնել, գանձողը կարող ե խնդրել կատարման տեղի դատարանից, վոր պարտապանի պաշտոնական փոխանորդ նշանակե:

Հոդ. 260.—Յեթե դատական վճռով հոժարակամ կատարման համար հատուկ պայմանաժամ չի նշանակված, դատական կատարածուն՝ պարտապանին ծանուցագիր հանձնելու կամ ուղարկելու հետ միաժամանակ, կատարման համար նրան վոչ ավելի քան յոթնոր ժամանակ ե տալիս:

Հոդ. 261.—Կատարումը տեղի է ունենում այն դատական կատարածուի ձեռքով, վորի գործունեության շրջանում գտնվում է պարտապանի պահանջի յենթակա գույքը, բայց անհրաժեշտության դեպքում դատական կատարածուն կատարողական գործողությունները շարունակում է յուր շրջանից դուրս, մի քաղաքի կամ գավառի սահմաններում:

Հոդ. 262.—Կատարումն ավարտելուց հետո դատական կատարածուն կատարողական թերթը վերադարձնում է դատական հիմնարկությանն ըստ պատշաճի, թերթի վրա մակագրություն անելով կատարման մասին:

Հոդ. 263.—Կատարողական գործողություններ կատարելիս դատական կատարածուն կարող է ստուգել պարտապանի բնակարանն ու մթերանոցները: Հիշյալ գործողությունները, այլ և բնակարանի ու մթերանոցների բացումը կատարվում է միլիցիայի և տնային վարչության ներկայացուցչի ներկայությամբ:

Հոդ. 264.—Տոն որերը և գիշեր ժամանակ վճիռների կատարումը թույլ է տրվում անհետաձգելի դեպքերում միայն, այն ժողովրդական դատավորի թույլտվությամբ, վորի շրջանում կատարումը տեղի է ունենում:

Հոդ. 265.—Դատական կատարածուն կարող է հետաձգել կամ կարճել կատարումը միայն դատարանի հատուկ վորոշման կամ պանձողի հայտարարության հիման վրա:

Հոդ. 266.—Յեթե դատական կատարածուի ստացած գումարները բավական չլինին պարտապանի վրա դարձրած բոլոր պահանջները բավարարելու համար, ալդպիսի դեպքում հիշյալ գումարները, նախապես նրանցից վճռի կատարման ծախքերը հանելուց հետո (հոդ. հոդ. 269 և 313) բաշխվում են հետևյալ ձևով. նախ՝ լրիվ բավարարվում են աշխատավարձի և աննդադրամի վերաբերյալ պահանջանքները, ապա՝ պետական հիմնարկությունները, դրանից հետո մնացած գումարը բաշխվում է բոլոր մնացյալ պարտատերերի պահանջանքների համեմատական չափով: Յուրաքանչյուր գանձողի հասանելի գումարների հաշիվը դատական կատարածուն կազմում է փողն ստանալուց հետո յերեք ուրվա ընթացքում: Նախապատվության իրավունքով բավարարելի պահանջները հաշվից գուրս են հանվում և վճարվում են Քաղաքացիական Որենսգրքի 101 հոդ. համաձայն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Նախապատվության կարգով, ըստ 266 հոդ-
բաժարարելի սննդագրամի նորման սահմանում ե Արդարադատության
Ժողովրդական Կոմիտարիաւր՝ Սոցիալական Ապահովության Ժողո-
վրդական Կոմիտարիաւրի համաձայնությամբ:

Հոդ. 267.—Յեթե հաշիւը կազմելուց հետո յերեք որվա ըն-
թացքում առարկություններ չանեն գանձողները կամ պարտապանը,
դատական կատարածուն փողը տալիս ե բոլոր պահանջատերերին՝
հաշիւի համաձայն: Առարկություններ լինելու դեպքում դատական
կատարածուն հաշիւը ներկայացնում ե Ժողովրդական դատավորին
ի հաստատություն: Ժողովրդական դատավորի՝ հաշիւի հաստա-
տության վերաբերյալ վորոշման դեմ գանգատ տալ չի կարելի:
Հաշիւի փոփոխության վերաբերյալ վորոշման դեմ գանգատ կարե-
լի ե տալ յոթն որվա ընթացքում:

Հոդ. 268.—Այն գումարները, վորոնցով պիտի բաժարարվեն
գանձողները՝ դատապահանջի ապահովման մասին տված խնդիրը-
նների հիման վրա ստացած կատարողական թերթերով, տրվում են
գանձողին միայն այն ժամանակ, յերբ նա ներկայացնում ե գոր-
ծի վճուի վերաբերյալ կատարողական թերթ: Դատապահանջը մերժ-
վելու դեպքում հիշյալ գումարները լրացուցիչ կերպով և ընդհա-
նուր կարգով բաշխվում են այն բոլոր պահանջատերերի միջև,
վոր մասնակցել են սկզբնական բաշխմանը, կամ հետ են տրվում
պարտապանին, յեթե մինչեւ այդ մյուս պահանջները բաժարար-
ված են:

Հոդ. 269.—Կատարման համար բոլոր ծախքերը վճարում ե
գանձողը ամեն մի գործողություն կատարելիս, իսկ հետո այդ ծախ-
քերը հանվում են գանձված գումարներից և վերադարձվում են
գանձողին:

Հոդ. 270.—Դատական կատարածուի գործողությունների
դեմ գանգատները տրվում են այն Ժողովրդական դատավորին,
վորի շրջանում տեղի ե ունենում կատարումը, յոթն որվա ըն-
թացքում՝ գանգատարելի գործողության կատարման օրից կամ
այդ գործողությունը գանգատավորին հայտնի դառնալու պահից:

Գ Լ ՈՒՒ XXXI.

ԳԱՆՁՈՒՄԸ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԴԱՐՉՆԵԼԸ

Հոդ. 271.—Գանձումը կարելի ե գույքի վրա դարձնել պար-

տապանի գույքը արգելքի տակ դնելով, ցուցակագրելով, կընքելով ու վաճառելով, ի բաց առյալ՝ ա) նրա համար և նրա ծախքովն ապրող անձանց համար անհրաժեշտ հագուստը, սպիտակեղենը, վոտնամաններն ու տնային գործածութեան առարկաները. բ) պարտապանի արտադրութեան և պրոֆիտին ալ զբաղմունքի, արհեստի կամ մանր տնայնագործութեան համար անհրաժեշտ գործիքները. գ) գյուղատնտեսութեան համար անհրաժեշտ գործիքները, մի կով, մի բեռնակիր կամ լծկան ձի կամ մի գույգ եղ կամ թե սրանց փոխարինող այլ անասուններ՝ յերեք ամսվա կերի պաշարով. դ) պարտապանի մշակած աշխատավորական հողաբաժնի առաջիկա սերմանման համար անհրաժեշտ քանակութեամբ սերմացուն. ե) չհալաքած բերքը և զ) միակ բնակելի տունը և յուր հարակից աշխատավորական գյուղատնտեսութեան այլ շէնքերը:

Հոդ. 272.— Գործարանների և արհեստանոցների սարք ու կարգի առարկաներն արգելադրութեամբ յենթակա կարող են լինել վաչ առանձին-առանձին, այլ գանձումն ամբողջ ձեռնարկութեան վրա դարձնելու դեպքում միայն, յեթե գործող որենսդրութեան համաձայն գանձումը կարելի ե դարձնել այդ ձեռնարկութեան վրա:

Հոդ. 273.— Յեթե գույքը գտնվում ե այնպիսի բնակարանում վոր պարտապանի և միաժամանակ այլ անձանց ձեռքի ե, արգելադրութեան յենթակա չե միայն այն դեպքում, յերբ բացահայտ ե, վոր գույքը այլ անձի ե պատկանում:

Հոդ. 274.— Յեթե գույքի արգելադրութեանը տեղի յե ունենում պարտապանի բացակայութեամբ, պարտադիր ե միլիցիայի կամ տնային վարչութեան ներկայացուցչի ներկայութեանը:

Հոդ. 275.— Արգելադրութեանը կատարվում ե գույքի ցուցակագրութեան մասին արձանագրութեան կազմելով և պարտապանին հայտարարելով, վոր գույքի տնորենութեան իրավունք չունի:

Հոդ. 276.— Գույքի ցուցակագրութեանը պիտի պարունակե

ա) ցուցակագրողի անունը.

բ) արձանագրութեան կազմելու ժամանակն ու տեղը.

գ) արգելադրութեան հիմքը.

դ) պահանջատիրոջ և պարտապանի անունը

ե) արգելքի տակ առած յուրաքանչյուր առարկայի անունն ու նկարագրութեանը.

զ) հիշատակութեան այդ առարկաների հատկանիշների կամ հազվագյուտ լինելու մասին.

ը) յուրաքանչյուր արգելադրյալ առարկայի գնահատութիւնը.

թ) պահպանողի անունը (հոդ. 280), պահպանութեան վերաբերյալ պարտականութիւնների բացատրութիւնը և պահպանողի ստորագրութիւնը.

ժ) կողմերի և ցուցակագրութեան ժամանակ ներկա յեղող անձանց նկատողութիւնները և դատական կատարածութիւն կարգադրութիւնները այդ նկատողութիւնների առթիւ.

ի) բոլոր ներկա յեղողների ստորագրութիւնը:

Հոդ. 277.— Յեթե արգելադրութեան ժամանակ յերրորդ անձինք իրենց իրավունքներն են ներկայացնում արգելադրվող գույքի վրա, վորի հետեւանքով հնարավոր չե գանձումներն այդ գույքի վրա դարձնել պարտապանի պարրաքերի համար, այդ մասին հիշատակութիւն ե արվում ցուցակագրութեան մեջ:

Հոդ. 278.— Դատական կատարածուն գանձողի պահանջմամբ կարող ե կնքել ցուցակագրված առարկաները, վորի մասին հիշատակութիւն պիտի անե ցուցակագրութեան արձանագրութեան մեջ:

Հոդ. 279.— Ցուցակագրութեան հետ միաժամանակ դատական կատարածուն գնահատում ե ցուցակագրված գույքը շուկայի միջին գներով: Անհրաժեշտութեան դեպքում գնահատութեան համար կարող ե փորձագետ հրավիրվել:

Հոդ. 280.— Ցուցակագրված գույքը հանձնվում ե պարտապանին ի պահպանութիւն: Յեթե պարտապանը հրաժարվի պահպանելուց կամ յերբ նա բացակա ե, դատական կատարածուն ե պահպանող նշանակում: Դատական կատարածուն կարող ե պահպանող նշանակել նաև գանձողի խնդիրքով, յեթե այդ խնդիրքը հարգելի համարե:

Հոդ. 281.— Պահպանողը, յեթե պարտապանը չե պահպանող նշանակված, պահպանութեան համար վարձատրութիւն ե ստանում Արդարադատութեան Ժողովրդական Կոմիտարիատի սահմանած սակագնի համաձայն. բացի դրանից պատշաճ դեպքերում նրան հատուցվում են պահպանութեան համար յուր փաստորեն արած ծախքերը:

Հոդ. 282.— Պարտապանը, վորին գույքը հանձնված ե ի պահպանութիւն, կարող ե ոգտագործել այն, յեթե պահպանելու տված գույքի հատկութիւնն այնպես ե, վոր ոգտագործելուց նրա արժեքը չի պակասի:

Գ Լ ՈՒՐ XXXII.

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՎ ԳԱՆՁՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐ-
ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ

Հոդ. 23.—Կատարողական թերթերով պետական հիմնարկու-
թյուններից և պետական ձեռնարկություններից գանձումն անելիս
սահմանվում են հետևյալ բացառությունները:

Հոդ. 284.—Գանձողը կատարողական թերթը ներկայացնում է
դատական կատարածուին պատճենի հետ միասին, վոր հանձնվում
է պարտապանին:

Հոդ. 285.—Դատական կատարածուն վճիռը կատարելու հա-
մար ժամանակ է նշանակում (հոդ. 260) յերկու շաբաթից մինչև
մի ամիս՝ պետական հիմնարկության կամ պետական ձեռնարկու-
թյան ծանուցագիր ստանալու որից:

Հոդ. 286.—Պահանջը չի դարձնվում պետական բյուզջեով
պահվող պետական հիմնարկության գույքի վրա, բայց գանձողը,
չվճարելու դեպքում, իրավունք ունի գանգատ տալու:

Հոդ. 287.—Յեթե պետական ձեռնարկությունն ու տնտեսավա-
րական հաշվով պահվելու յի փոխանցված, դատական կատարածուն՝
կատարման պայմանաժամը լրանալուց հետո, ձեռնարկում է
արգելադրության և վաճառելու այն գույքը, վորի վրա գործող
որենադրության համաձայն գանձումը կարելի չի դարձնել. գան-
ձումը, բացի սրանից, չի կարելի դարձնել այն միջոցների վրա,
վոր պետք են անցած ժամանակի և յերկու շաբաթվա համար ել
կանխավ աշխատավարձ վճարելու:

Գ Լ ՈՒՐ XXXIII.

ԳԱՆՁՈՒՄԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԺԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ
ՎՐԱ ԴԱՐՁՆԵԼԸ

Հոդ. 288.—Բոլոր հիմնարկություններն ու ձեռնարկություն-
ները, թե պետական, կոոպերատիվ, հասարակական և թե մասնա-
վոր անձինք, պարտավոր են նշանակված ժամանակին աեղեկու-
թյուն տալ դատական կատարածուի պահանջմամբ, թե պարտա-
պանը ծառայում է արդյոք իրենց մոտ և թե վորքան է ընթա-
յիկ ամսում նրան հասանելիք ամեն տեսակ մշտական վարձա-
տրության և միանվագ վճարումների գումարը:

Հոդ. 289.—Աշխատավարձից գանձումները կատարվում են հետևյալ հիմունքներով. ա) միանգամայն ազատվում է գանձումից աշխատավարձի այն մասը, վոր հավասար է, Աշխատանքի Որենագրքի 59 հոդ, համաձայն, սակայն ուցի կոպարի առաջին կարգի՝ տվյալ վայրի համար սահմանված պարտադիր նվազագույն աշխատավարձին բ) նվազագույն աշխատավարձից ավելի ստացածից կարելի չէ բռնել վոչ ավելի քան 50% իբրև ընտանիքի անդամների անդադրած գանձվող գումարների և 20% մնացյալ բոլոր գանձումների համար:

Գանձման չափերի սույն հոդվածի ա և բ կետերով վորոշված սահմանափակումները չեն տարածվում տանտիեմների, պարգևների և ծառայության համար վորպես պրեմիա ստացած վարձատրությունների վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ընտանիքի անդամների ապրուստի և այլ պարտքերի համար միաժամանակ գանձումն անելիս բանվորին ու ծառայողին համենայն դեպս պիտի թողնվի աշխատավարձի 50% -ը:

Հոդ. 290.—Դատական կատարածուն տեղեկություն ստանալուց հետո (հոդ. 288) անհապաղ հաշիվ է անում և պարտավորեցնում է տեղեկություն տվողին համապատասխան գումարը հանել ոտճիկներից ու ներկայացնել իրեն՝ դատական կատարածունին:

Հոդ. 291.—Դատական կատարածունի կարգադրությունը (հոդ. 290) չկատարելու, այլ և տեղեկություն չտալու դեպքում, այն անձինք ու հիմնարկությունները, վորոնց մոտ ծառայում կամ աշխատում է պարտապանը, պատասխանատու չեն գանձողների առաջ գանձվելիք գումարի չափով:

Գ Լ ՈՒՄ XXXIV.

ԳԱՆՁՈՒՄԸ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ՄԱՏ ԳՏՆՎՈՂ ԳՐԱՄԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԴԱՐՁՆԵԼԸ

Հոդ. 292.—Դատական կատարածուն գանձումը պարտապանի մասնավոր անձանց մոտ և պետական հիմնարկություններում ունեցած գրամական գումարների և գույքի վրա դարձնելիս, հիշյալ անձին կամ հիմնարկությանը հարց է տալիս, թե նրա մոտ պարտապանին պատկանող վոր և է գույք կա թե վոչ, ի՞նչ հիման վրա և վորքան ժամանակով և նրան արամադրված, մասնանշելով, վոր այդ հարցն ստացվելու պահից նրանց մոտ յեղած գույքի և գու-

մարների վրա արգելք ե գրվում գանձելի գումարի չափով և վոր դրանցից բոլոր վճարելիքները՝ մինչև գանձելի գումարի լրիվ գիշուցումը, նրանք պարտավոր են հատուցանել վոչ թե պարտապանին, ալլ դատական կատարածուին:

Հոդ. 293.—Սրդյունաբերական, վարկային, առևտրական և այլ ամեն տեսակ հիմնարկություններն ու ձեռնարկությունները, պետական, կոոպերատիվ, հասարակական և մասնավոր, ալլ և մասնավոր անձինք, պարտավոր են տեղեկություն տալ դատական կատարածուի նշանակած ժամանակին, թե ինչ գումարներ, արժեքներ և այլ գույք կա իրենց մոտ, վոր պարտապանին ե պատկանում, և հարցն ստանալու որից առանց դատական կատարածուի թույլտվության իրավունք չունին գույք վերադարձնելու կամ դրամարժեք տալու պարտապանին արգելադրության սահմաններում:

Հոդ. 294.—Դատական կատարածուն, յերբ վոր տեղեկություն ե ստանում, վոր յերրորդ անձանց մոտ գույք կա, ցուցակագրում ե հիշյալ գույքն և արժեքները, իսկ դրամը հանձնելն ու գույքը աճուրդով վաճառելը տեղի յե ունենում՝ նայելով, թե ինչ պայմաններով են դրանք յեղել նրանց մոտ: Բայց յեթե դատակրի գույքն ու արժեքները գտնվում են պետական հիմնարկություններում ու պետական ձեռնարկություններում, դատական կատարածուն ցուցակագրություն չի անում, և դրամ հանձնելը կամ գույք վաճառելը կարող ե տեղի ունենալ միայն այն պահից, յերբ հիմնարկությունը այդ գույքը պիտի տրամադրեր պարտապանին:

Հոդ. 295.—Տեղեկություն տալուց խուսափելու համար՝ կատարման վայրի ժողովրդական Դատավորի վորոշմամբ կարող ե տուգանք դրվել մինչև 100 վոսկի ուրվի:

Գ Լ Ո Ի Խ XXXV.

ԳԱՆՁՈՒՄԸ ՇԵՆՔԵՐԻ ՅԵՎ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎՐԱ ԳԱՐՉՆԵԼԸ

Հոդ. 296.—Գանձումը շենքերի և կառուցման իրավունքն վրա դարձնելիս բացի ընդհանուր կանոններից՝ գործադրվում են հետևյալ հոդվածները:

Հոդ. 297.—Պարտապանին ծանուցագիր ուղարկելու հետ միաժամանակ դատական կատարածուն ծանուցագիր ե ուղարկում

կոմմունալ բաժնին և այնտեղից տեղեկութիւն և ուզում այն շենքի կամ կառուցման իրավունքի պարտապանին պատկանելու մասին, վորոնց վրա զարձնվում և գանձումը, այլ և քաղվածք և ուզում կոմմունալ բաժնի տոմարագրութեան մատյանից:

Հոդ. 298.—Դատական կատարածուն միւնուշն ժամանակը արգելադրութիւնն ուղարկում և Գլխավոր Դատարանի նոտարական բաժանմունքին և տեղեկութիւն և պահանջում այն գույքի վրա արգեն յեղած արգելադրութեանց մասին:

Հոդ. 299.—Գլխավոր Դատարանի նոտարական բաժանմունքի տոմարում արգելադրութիւնն արձանագրելուց հետո արգելադրութեան մեջ նշանակված գանձումների գումարը պարտադիր և այն բոլոր անձանց համար, վոր այս կամ այն իրավունքները ձեռք կը բերեն արգելադրյալ շենքի կամ կառուցման իրավունքի վրա:

Գ Լ Ո Ի Խ XXXVI.

ԱՐԳԵԼԱԴՐՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Հոդ. 300.—Արգելադրյալ գույքը պիտի վաճառվի աճուրդով: Պարտապանի և գանձողների համաձայնութեամբ ապրանքները կարող են վաճառվել ապրանքի բորսայում բորսայի միջնորդի ձեռքով:

Հոդ. 301.—Արգելադրյալ գույքն աճուրդով վաճառվում և այնտեղ, ուր գույքն և գտնվում:

Հոդ. 302.—Գույքը տեղափոխելն ու վաճառումն ուրիշ տեղում թույլ և տրվում միայն գանձողի և պարտապանի փոխադարձ համաձայնութեան դեպքում՝ ծախքերի համար անհրաժեշտ գումարը նրանց հաշվին ու նրանց պատասխանատվութեամբ վճարելու պայմանով:

Հոդ. 303.—Վաճառման ժամանակը նշանակում և դատական կատարածուն: Արգելադրութեան և վաճառման միջանկյալ ժամանակը եոթն ուրից պակաս և մի ամսից ավելի պիտի չլինի, բացի շուտ փչացող առարկաներից:

Հոդ. 304.—Աճուրդով վաճառելու մասին դատական կատարածուն վոչ ուշ քան յերեք որ վաճառումից առաջ հայտարարում և տեղական պաշտոնական լրագրում, իսկ գանձողի կամ պարտապանի խնդիրքով՝ նաև այլ լրագրներում: Վաճառման մասին հայտարարութիւն և կախ տրվում նաև այնտեղ, ուր աճուրդը պիտի

տեղի ունենա, և դատական կատարածուի՝ դիվանատանը՝ վոչ ուշ քան յերեք որ վաճառումից առաջ:

Հոդ. 305.—Յեթե գույքը գրավ է դրված, վաճառման որվա մասին ծանուցագիր է ուղարկվում նաև գրավառուին: Կառուցման իրավունքի վաճառման որվա մասին ծանուցագիր է ուղարկվում կոմսունալ բաժնին:

Հոդ. 306.—Հայտարարությունը պիտի պարունակե հետևյալ տեղեկությունները. ա) վաճառվող գույքը (թվել), ում գույքն է վաճառվում, գույքի գնահատությունը. բ) վաճառման տեղն ու ժամանակը (քաղաքը, փողոցը, տունը):

Հոդ. 307.—Պարտապանն իրավունք ունի ցույց տալու, թե ինչ հերթով պիտի գույքը վաճառվի: Յեթե գույքի մի մասի վաճառումից այնքան գումար գոյանա, վոր բավական լինի գանձողին բավարարելու և գանձման վերաբերյալ բոլոր ծախքերը հոգալու համար, մնացածը չի վաճառվում:

Հոդ. 308.—Գնորդը վաճառվող առարկան իր վրա մնալուց հետո պարտավոր է անհապաղ վճարել վորպես առգին վոչ պակաս քան սկզբնական գնահատության գումարը, իսկ մնացյալը՝ վոչ ուշ քան հաջորդ որը: Հիշյալ գումարն անհապաղ չվճարող գնորդը հեռացվում է աճուրդին մասնակցելուց:

Հոդ. 309.—Շենքերի վաճառման աճուրդի բոլոր մասնակցեմ ցանկացողները պարտավոր են դատական կատարածուին տեղեկություն ներկայացնել կոմսունալ բաժնից, վոր վոչ իրենք, վոչ իրենց ամուսինը և վոչ իրենց անչափահաս զավակները տվյալ վայրում վոչ մի շենք չունին, այլ և ստորագրություն տալ, վոր վոչ իրենք, վոչ իրենց ընտանիքի հիշյալ անդամները շենքեր չունեն մի այլ վայրում (Քաղաքացիական Որենսգրքի հոդ. 182):

Հոդ. 310.—Բացի նախորդ հոդվածից՝ մատնանշված տեղեկություններից ու ստորագրություններից՝ աճուրդին մասնակցել ցանկացողները շենքի կամ կառուցման իրավունքի գնահատության 10%/-ի չափով մի գումար ներկայացնում են իրրեմ գրավական, վոր սակայն չի պահանջվում պետական հիմնարկություններից ու ձեռնարկություններից.

Հոդ. 311.—Այն անձի տված գրավականը, վորի վրա յե մնացել վաճառված շենքը կամ կառուցման իրավունքը, հաշվակցում է գնման գումարին: Աճուրդին մասնակցած մնացյալ անձանց

գրավականները վերագարձվում են աճուրդը վերջանալուց հետո անհապաղ: Յեթե գնորդն իրենից հասանելի գումարը չվճարի յոթն որվա ընթացքում, գրավականը մնում է հոգուտ պետական գանձարանի:


Հոդ. 312.—Աճուրդով շենք կամ կառուցման իրավունք գնողին տրվում է աճուրդով վաճառելու մասին կազմված արձանագրության պատճենը: Այդ պատճենի հիման վրա կազմվում է նոտարական ակտ՝ շենքը կամ կառուցման իրավունքը ձեռք բերելու մասին, վոր ապա անշուշտ պիտի տուժաբագրվի կոմսոնալ բաժնում:

Հոդ. 313.—Վաճառումից ստացված գումարից հոգացվում են գույքի արգելադրության և վաճառման ծախքերը, իսկ մնացորդով բավարարվում են գույքի վրա դարձրած գանձումները:

Հոդ. 314.—Աճուրդը համարվում է չկայացած. 1) յեթե վոչ վոք չգա աճուրդին մասնակցելու. 2) յեթե վոչ վոք գնահատությանից ավելի գին չտա կամ 3) յեթե գնորդը ժամանակին չհատուցանե մնացորդ գումարը (հոդ. 308):

Հոդ. 315.—Աճուրդի չկայանալու դեպքում գանձողները յերեք որվա ընթացքում կարող են հայանել, վոր վաճառվող գույքը թողնվի իրենց վրա գնահատության համաձայն և իրենց պահանջների չափի համապատասխան հերթի կարգով:

Հոդ. 316.—Յեթե աճուրդը չկայանա և գանձողներից վոչ վոչ վոք գույքը յուր վրա չթողնե, դատական կատարածուն կըրկնաճուրդ է նշանակում վոչ վաղ քան մի շաբաթից հետո, առաջին աճուրդի համար սահմանված կարգով: Կրկնաճուրդն սկսվում գնահատության կամ աճուրդի ժամանակ առաջարկված առաջին գումարից:







ՀՀ Ազգային գրադարան



NL0943013

2h 347

492

557